



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

түшнүржин  
ниңгү  
чындыбынын



1906



5 OCT 2011

Գ. Պ. Ե Յ Յ Ե Կ

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



ԺԱՄԱՆԱԿ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՅԱՍՏ

Պատկերագարդ

Թիֆլիս  
1906

9(47.925  
4-22

15633

9(47.325)  
4-22

ԵՐԵՎԱՆ  
ՊՈ. Բ. Բ. Ա.

ԱՅ

Գ. ՎԱՆՑԵԱՆ

# ՀԱՅՈՑ ՊԵՏՄՈՒԹԻՒՆ

11

ԺԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ:

36952

9

## ՊԱՏԿԵՐԱՁԱՐԳ

ԹԻՖԼԻԶ  
1906

Ո 8. 08. 2013

ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

Թ Ի Ֆ Լ Ի Զ  
Էլեքտրաշաբթ տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ. Մաղաթեան փող. 16 5.  
1906 (188)

Նուէր Թիֆլիզի Առևտրական և Մանթաշևի  
վաճառականական գպրոցների իմ աշակերտներին:

Դուք, սիրելի աշակերտներ, որ սովորում էք Եղիպատոսի, Բաբելոնի, Ասորեստանի, Մարաստանի, Հրէաների, Պարսից և այլ բազմաթիւ ազգերի պատմութիւնները, շատ անգամ դիմել էք ինձ հարցերով.—Վարժապետ, ինչու չենք սովորում հայոց պատմութիւն, երբ պիտի սովորենք մեր սեփական պատմութիւնը:—

Ակամայ լոռութիւնից յետոյ, այս գիրքն է ահա, որ պիտի պատասխանէ ձեր հարցերին, ուր համառօտ ու կարճ, պիտի գտնէք Ձեր նախնեաց մեծագործութիւնների պատմութիւնը:

Գ. ՎԱՆՑԵԼՆ

## ՀԱՅԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Մարդկութիւնը բաժանւումէ միքանի խոշոր ցեղերի,  
ինչպիսի են, արիներ, մօնզօներ, սեմիաներ, նեղներ  
և այլն։ Այդ ցեղերի մէջ որպէս իր մարմնի գեղեցկու-  
թեամբ, նոյնպէս մտաւոր բարձր ընդունակութիւններով  
առաջին տեղն է բոնում արիական կամ հնդկերպական  
ցեղը։ Այդ ցեղն է, որ ստեղծագործելէ մարդկային ամե-  
նաբարձր կուլտուրան և գիտութեան ու արուեստի մէջ  
գրեթէ չունի իր մրցակիցը։ Այդ ցեղի բնավայրնէ Եւրոպան,  
Փոքր և Միջին Ասիան մինչև Հնդկաստան։ Այօր, սակայն,  
գրեթէ ամբողջ աշխարհը գտնւումէ այդ ցեղի ձեռին։

Այդ ցեղին էին պատկանում հնումը յոյները, հոռ-  
մայեցիք, նոյն այդ ցեղի մի մի ընտանիք են կազմում այս-  
օրուայ ամենաքաղաքակիրթ ազգերը. անգլիացիք, ֆրան-  
սացիք, գերմանացիք, իտալացիք, լեհերը, ոռուները, պար-  
սիկները և Հնդկաստանում արիական ծագում ունեցող  
որոշ ցեղեր։


Այդ ցեղին են՝պատկանում և հայերը, որոնք հէնց օտար-  
ազգի գիտնականների և ճամբորդների վկայութեամբ  
ամենալինդունակ ազգերից մինն են համարւում, առաջինն  
էին որ ընդունեցին քրիստոնէութիւն, և հազարաւոր տա-  
րի շարունակ կռուեցան վայրենի ու բարբարոս ցեղերի  
հետ, պահպանելու համար իրանց լեզուն, հայրենիքը և

կրօնը:— Հայաստանը, ուր ապրում են հայերը, գտնուումէ Ասիայի, Եւրոպայի և Աֆրիկայի մէջ տեղը և այդ երեք մայր ցամաքները կապող անցքնէ:

Հնուց հետէ նա մի կամուրջ է եղել, միակ ճանապարհը, որի վրայով անցելեն զանազան ազգեր. Ասիայից Եւրոպա կամ Աֆրիկա և ընդհակառակը: Բոլոր մեծ արշաւներն ու պատերազմները այս երեք մայր ցամաքների մէջ, ինչ-պէս օրինակ. ազգերի մեծ գաղթը, Պարսիկների արշաւները, Հոռմի կոհւները Պարթևների հետ, Արաբաց յարձակումները պարսից կամ յունաց վրայ, խաչակրաց արշաւնքները, Սելճուկների կամ Օսմանցոց շարժումները, ոռւսաց ձգտումը գէպի հարսւ կամ արևելք, կատարուել է Հայաստանի վրայով: Ապրելով այսպիսի երկրում, հայ ազգը մի հանգիստ օր չէ ունեցել իր ընդունակութիւնները գործադրշելու կամ զարգացնելու. այնու ամենայնիւ «մեր երկրումն էլ կատարուել են քաջութեան և արիութեան մեծ գործեր», ինչպէս գեղեցիկ ասելէ մեր պատմահայը Խորենացին, որոնք արժանի են ամեն մի կըթուած հայի ուշադրութեանը: Մեր ազգը գեռ հինգերորդ դարուց մշակել ու զարգացրելէ մի գեղեցիկ և հարուստ լեզու, մի հարուստ և հիանալի զբականութեան հետ: Ճարտարապետութեան մէջ ստեղծել է Անի քաղաքի նման մի հրաշակերտ, որի աւերակների մնացորդն անդամ, հէնց այսօր, ամեն մի կըպաշցու և ամեն մի ճամբորդի հիացքն ու զարմանքնէ շարժում: Հինգ հարիւրամեայ խաւարից և մտաւոր ու քաղաքական անկումից յետոյ այդ ազգը այսօր նորից զարթելով ստեղծելէ երկու լեզու. արևմտեան և արևելեան հայերէն և նորից ուզումէ ուսումնասիրել մի կողմից իր անշեալ փառքի նսեմ մնացորդները, միւս կողմից ընդունե-

լով երոպական կուլտուրա, տարածել այն հարևան ազգերի մէջ: Այս ազգի պատմութիւննէ ահա, որ մենք պիտի սովորինք այս վոքրիկ գրքոյկից:—

Միրենք ու սովորինք, մեր ազգի պատմութիւնը, սիրելի մանուկներ:...



ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏ. (2300 թ. Ք. ա.)

Բարելոնի աշտարակաշինութիւնից յետոյ Բէլ կամ Ներովթ անունով մի հակայ սկսաւ բոնանալ ժողովրդի վրայ: Հայկ անունով մի քաջ որսորդ չուզեց հնազանդիլ նրան և առնելով իր որդիքն ու թոռները, թուով 300 հո-

գի, հեռացաւ Բաբելոնից դէպի հիւսիս: Նա բնակութիւն հաստատեց Արարատեան երկրի մի լեռնադաշտի վրայ. շինեց մի գիւղ և անոնը զրեց Հայկաշէն. իսկ գաւառը կոչւցաւ Հարք: Այդ երկրի հին բնակիչներն էլ միանալով Հայկի որդոց, հնազանդեցան նրան:

Այս բանը դուք չեկաւ Բէլին: Նա պատգամ ուղարկեց Հայկին ասելով. „Գնացիր բնակուեցար ցուրտ սարքնամանիքի մէջ. լաւ կանես, որ քո սառն հապարտութիւնը մեղմես և գաս, հնազանդելով ինձ, հանգիստ ապրես իմ տէրութեան մէջ ուր էլ կամենաս:“

Հայկը խիստ պատասխանով ետ գարձրեց Բէլի պատգամաւորներին: Բէլը զայրացաւ և ահազին բանակով եկաւ Հայկի վրայ պատերազմելու: Հայկը լսելով Բէլի գալուստը, հաւաքեց իր ցեղից բոլոր պատերազմողներին և վաճայծովի մօտ մի դաշտավայրում հանգիպեց թշնամուն:

Բէլը մի խումբ քաջերով առաջ էր ընկած. Հայկը յարձակուեցաւ նրա վրա: Երկու կողմից էլ բազմաթիւ հւաներ ու քաջեր ընկան, բայց երկու կողմն էլ մնացին պարտ: Բէլը մտածեց ետ փախչել և միանալ գլխաւոր բանակին, բայց Հայկը նրան ժամանակ չտուաւ, նրա զօրաւոր նետը ցցուեց Բէլի կրծքին և բոնաւոր հսկան գետին տապալուեց: Բէլի անտէր մնացած զօրքը ցիր ու ցանեղաւ: Հայկը տարաւ յաղթութիւնը:

Պատերազմի տեղը Հայկը մի դաստակերտ շինեց և առանց Հայք: Բէլի ընկած տեղը կոչուեցաւ Գերեզման: Հայկն իր ժամանակի հսկաների մէջ ամենաքաջն էր և նշանաւոր. նա հաստաբազուկ էր, գեղեցիկ գանգուր մաքերով՝ խաժ աչքերով, գեղապատշաճ և անձնեայ: Նրա

անունովէ, որ մենք կոչւումենք Հայ, իսկ մեր երկիրը Հայաստան:—

ՀԱՅԿԻ ՅԱԶՈՐԴՅՆԵՐԸ ՄԻՒՋԵՒ ԱՐԱՄ.

Հայկի յաջորդն էր Արմենակ: Սա իր Մանաւազ ու Խոռ եղբայրներին թողնելով Հարք գաւառը, ինքը գնաց դէպի հիւսիս և բնակութիւն հաստատեց մի բարձր լեռան մօտ, որ Արմենակի անունով կոչուեց Արագած իսկ գաւառը Արագածոտն:

Մանաւազի որդի Բագր բնակուեց աղի ծովի արեմատահիւսիսային կողմերը, որի անունով էլ ծովը կոչուեց Բգնունեաց ծով (այժմ Վանալ):

Արմենակին յաջորդեց Արամայիս, որ Արարատեան գաշտում, Գեհոն (Երասխ) գետի ափին մի քաղաք շինեց, որ հիմնողի անունով կոչուեցաւ Արմաւիր և վերջը Հայկագանց մայրաքաղաքը գարձաւ: Նա իր որդի Շարային, որ սաստիկ շատակեր ու բազմածին էր, ուղարկեց մօտակայ մի արգաւանդ գաշտ, որ Շարայի անունով կոչուեց Շիրակ:— Դրա շատակերութիւնն առակ էր դարձել ժողովրդի մէջ, որ ասումէին ամեն մի որկրամոլի: „թէ քննը Շարայի որկորնէ, մերը Շիրակի անբարքը չե՞ն:“—

Արամայիսին յաջորդեց Ամասեա, որի անունով էլ կոչուեցաւ Հայաստանի ամենամեծ լեռոր—Մասիս: Նա ունեցաւ երեք որդի: Գեղամ, Ժիր Փառոխ և կայտառ Ցոլակ:— Քրանց համար նա շինեց երկու աւան մինը Փառոխոտ, միւր Ցոլակերտ:

Մի քանի ժամանակից ետոյ Գեղամը թողնելով իր որդի Հարմային Արմաւիր՝ ինքը գնումէ արևելահիւսիս մի ծովակի մօտ: Այդտեղ նա հիմնումէ մի աւան, որ կոչւումէ

Գեղարքունի, ծովս էլ Գեղամայ ծով (այժմ Սևան): Այս երկիրները մինչև Արաքս գետը Գեղամը տալիս է իրեւ ժառանգութիւն իր Սիսակ որդուն. արա անունով էլ երկիրը կոչուեց Սիսական կամ Սիւնիք:

Այսպէս Հայկի որդիքն ու թոռները հետզհետէ բազմանալով ցըուեցին ու տիրեցին ամբողջ Հայաստանին:  
Կազմուեցան փոքրիկ ցեղեր իրանց նահապետներով. սակայն միութիւն և կապ չկար նրանց մէջ և թշնամիները նրանց դիւրութեամբ նեղում էին: Այդ միութիւնն ու կապ հաստատողն եղաւ քաջն Արամ:

Ա. Բ Ա. Մ (1300 թ. Ք. ա.)

Արամը վերին աստիճանի քաջ և հայրենասէր մարդ էր. նա լաւ էր համարում մեռնել՝ քան տեսնել այն նեղութիւնները, որ օտարները տալիս էին հայերին: Նա միացնումէ հայ ցեղապետներին, 50000 քաջ ու ընտիր զօրք հաւաքում և նրանց գլուխն անցնելով, յարձակումէ նիւքար Մարէսի վրայ, որ նեղացնումէր Հայաստանի արևելեան կողմը:

Անսպասելի յարձակումով՝ դեռ արել չծագած, Արամը կոտորում է նիւքարի զօրքին և նրան էլ գերի առնելով, բերում է Արմաւիր:

Այստեղ աշտարակի ծայրին մեխում են նրան, ճակատից ի տեսիլ անցորդների: Նինուելի թագաւոր նինուը թէպէտ մտածումէր իր նախահօր— Բէլի վրէժն առնել Արամից, բայց տեսնելով նրա քաջ պատերազմները, մարդարտեայ վարսակալ ուղարկեց նրան ընծայ և իր երկրորդը կարգեց Արամին:

Մարէսի երկիրներին տիրելուց յետոյ, Արամը զէնքն

ուղղեց հարաւ, ասորի Բարշամի դէմ, որ Հայաստանի հարաւ կատարեալ անապատ էր դարձրել:

Արամ նրան էլ յաղթելով զօրքը ցըուեց մինչև Կորդուաց լեռները և Բարշամի երկիրն հարկատու արաւ: Բարշամն էլ պատերազմի մէջ մեռաւ: Սա այն Բարշամնէր, որի քաջութեան համար ասորիներն իբրև աստուած էին պաշտում:— Արևելեան և հարաւային կողմերը թշնամուց ապահովելով, Արամ իր ուշքը դարձրեց գէպի արևմուտք:

Պոհառուի (Սև ծով) և Միջերկրականի մէջ գտնուած երկրին այդ ժամանակ իշխումէր Պայապիս Քաղեայ անունով մէկը, որ զօրք հաւաքեց Արամի դէմ դուրս գալու: Մեր Արամը 40000 հետեւակ և 2000 հեծելազօրով յարձակուեց Պայապիսի վրայ, ջարդեց նրան և փախցրեց մինչև Միջերկրականի կղզիներից մէկը:

Պայապիսի երկիրներին ափեց Արամ և բնակիչներին հրամայեց, որ հայերէն սովորեն ու խօսին. ինքը դառնալով Հայաստան, այնտեղ թողեց Մշակ անունով մէկին 10000 զօրքով: Մշակն այնտեղ մի աւան հիմնեց իր անունով, որ տեղացիք անուանում էին Մաժաք և վերջը կոչուեցաւ կեսարեա: Այս երկիրներից էր, որ կազմուեցաւ Առաջին, երկրորդ, երրորդ և Չորրորդ Հայք գաւառները, որ միասին կոչուեցան փոքր—Հայք:

Արամի նշանակութիւնը շատ մեծէ մեր պատմութեան մէջ. նա էր որ բարոր հայ ցեղերին միացրեց և դարձրեց մի ազգ. թշնամիներին վանելով՝ նա հիմք զրեց մի մեծ և ընդարձակ տէրութեան, ամեն տեղ բնակիչներով լցրեց և հայ անունը պատկառելի դարձրեց ամենի առաջ: Նրա անունը այնքան ազդու և հոչակառը էր, որ օտար ազգերը մեզ և մեր երկիրը ճանաչում և կոչում են նրա

անունով ԱՐՄԵՆ, ԷՐՄԵՆԻ, (Արամեան) և մեր Երկիրն  
էլ ԱՐՄԵՆԻԱ:—

ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ.

Արամին յաջորդեց նրա որդին՝ գեղեցիկ Արան. սրա  
անունով է, որ Հայաստանի ամենամեծ դաշտավայրը կոչ-  
ում է Այլարատ:—

Նինոսի մահից յետոյ Ասորեստանի թագն անցաւ նրա  
կնոջ, Շամիրամին: Սա լսելով Արայի գեղեցկութեան մասին,  
ուզեց ամուսնանալ նրա հետ: մարդիկ ուզարկեց ընձա-  
ներով և խնդրեց, որ Արան գնա Նինուէ, դառնայ Ասորոց  
թագաւոր և կամ, եթէ կամենումէ, նորից եւս դառնայ  
Հայաստան:— Արա գեղեցիկը չհամաձայնեց, որովհետեւ  
ամուսնացած էր Նուարդ իշխանուհու հետ: Շամիրամը  
բարկանալով զօրք հաւաքեց, եկաւ Հայաստան և գէնքի  
ուժով կամենումէր տիրել Հայաստանին և Արային: Պա-  
տերազմելիս նա հրամայեց իր զօրքին, որ խնայեն Արային  
և ողջ-առողջ գերի բռնեն: Պատերազմի մէջ քաջ Արան  
սպանուեց: Շամիրամը որոնել տուաւ նրա գիտկը և զրեց  
իր պարատի վերնատանը, որ աստուածները լիզեն և կեն-  
դանացնեն նրան:

Հայերն իրանց իշխանի մահուան վրէժը հանելու հա-  
մար նորից ապստամբեցան և պատերազմի դուրս եկան:   
Շամիրամն իր մարդկանցից մէկին հազցնելով Արայի շո-  
րերը, ցոյց տուաւ հայերին և հանգստացրեց, առելով, որ  
աստուածները լիզեցին նրա վէրքերը և առողջացրին նրան:   
Այն ինչ՝ Արայի մարմինը հոտել էր արդէն և Շամիրամը  
ստիպուած էր մի փոս փորել տալ և թաղել:

Շամիրամը տեսնելով Հայաստանի հիանալի գլուխութը, ա-

նուշ և սառն աղբիւրները, գեղեցիկ, ձիւնապատ լեռները,  
կապոյտ ու սիրուն ճերը, որոշեց ամառները անցկացնել  
Հայաստանում: զրա համար Ասորեստանից բերաւ բազմա-  
թիւ արհեստաւորներ ու բանւորներ, շինել տուաւ մի քա-  
ղաք, և կոչեց Շամիրամակերտ, որ հիմա կոչւումէ Վան:

Արայի մահից յետոյ Շամիրամը Հայաստանի իշխա-  
նութիւնը կարդոսին յանձնեց: Սա մեռաւ պատերազմի  
դաշտում, Շամիրամի հետ Նինուասի դէմ կոռւելիս:—

Կարդոսն ունէր մի որդի, խելացի և հանճարաւոր Անու-  
շաւանը: Սա նուիրուած էր Արմաւիրի մօտ գանուած Սօ-  
սեաց անտառին, ուստի և կոչւումէր նաև Սօս կամ Սօսա-  
նուէր: Այս անտառի սօսաւիւնից հին հայերը բուշակու-  
թիւններ էին անում:

Հօր մահից յետոյ Անուշաւանը գերի է ընկնում ասո-  
րիների ձեռը, բայց շահելով Նինուասի սիրաը, նախ ստա-  
նումէ Հայաստանի մի մասը կառավարելու, ապա նաև  
ամբողջ Հայաստանը:—

Սրանից յետոյ հայերը բազմաթիւ իշխաններ ունեցան,  
որոնք լինելով Ասորոց գերիշխանութեան տակ, չկարողացան  
անուանի գործեր կատարել. մինչև որ եօթերորդ դարու  
սկիզբն իշխանութեան գլուխ անցաւ Պարոյրը:—

ՊԱՐՈՅՐ ՀԱՅԿԱԶՆ:

Ասորեստանն արդէն թուլացել էր: Մարաց կեաքսար Ա. և  
մեր Պարոյրը միացան Բարելացոց Նարուպալասար թագա-  
ւորի հետ և յարձակուեցան Նինուէի վրայ: Քաղաքը կոր-  
ծանեցին, իսկ Ասորեստանի վերջին թագաւորը թշնամու  
ձեռը չընկնելու համար այրուեցաւ իր կանսաց հետ, պա-  
լատի մէջ:

Այս պատերազմից յետոյ Պարոյրն ստացաւ թագ և  
եղաւ առաջին պատկանիք թագաւոր: Նրանից առաջ եղած  
հայ իշխանները նահապեաներ էին: —

Հ Բ Ա Զ Ե Ա Յ.

Պարոյրին յաջորդեց Հրաչեայ: Սա օգնեց բարիլացոց  
Նաբուգոդոնոսոր արքային Հրէաստան պատերազմի դնա-  
լիս: Սրա ժամանակ Հրէայ գերիներից Շամբաստ անունով  
մի իշխան բնակութիւն հաստատեց Հայաստան, որից առաջ  
եկաւ Բագրատունի նախարարական տոհմը: —

Հրաչեային յաջորդում են ութ-թագաւորներ, մինչև  
Տիգրան Ա. որոնց մասին պատմութիւնը մեզ ոչինչ չի  
աւանդում: —

ՏԻԳՐԱՆ Ա. ԵՐՈՒԱՆԴԵԱՆ.

Տիգրանը մեր թագաւորներից ամենանշանաւորն էր որ-  
պէս իմաստուն, քաջ աշխարհակալ և ժողովրդասէր, իշխան:  
Ազգային երգիչները բամբիռ նուազելով գովում էին նրա  
շէկ ու գանգուր մագերը, անուշ աչքերը, բարձր հասակը,  
լայն թիկունքը, գեղեցիկ ոտները, ...  
Կերակի մէջ նա չափաւոր էր, կերուխումի մէջ օրինաւոր,  
իմաստուն, վեհանձն և մարդկային բոլոր արժանիքով լի:  
Արդարադատ էր նա, և ամեն բանի մէջ հաւասարասէր.  
հչ լաւերին էր նախանձում և ոչ թոյլերին էր արհամար-  
հում, այլ ամենքին առհասարակ խնամք էր տաճում:

Մեր երկիրը նա բարձրացրեց, քաջերի գլուխն անցնե-  
լով, քաջութիւններ ցոյց տուաւ և բազմաթիւ ազգեր հար-  
կատու և հպատակ դարձրեց մեզ:

Երկիրը հարստացրեց ազնիւ մետախներով ու թան-  
կագին քարերով: Ժողովուրդն այն աստիճան հարստացաւ,  
որ նրա ժամանակ մարդ ու կին հագնւումէին թանկագին  
հազուսաներ: —

Տիգրան առանձին ուշը դարձրեց զօրքի վրայ. հետե-  
ւակները գարձրեց հեծելազօր. պարսաւորին տուաւ նետ ու  
աղեղ. և բոլոր մասցեալին զինեց տէգով, նիզակով և վա-  
հանով, այնպէս որ, միայն նրանց գէնքի շառաչն ու վայլը  
բաւական էր թշնամուն վախեցնելու և հալածելու:

Տեսնելով Տիգրանի աջողութիւնները, Պարսից թագա-  
ւոր կիւրուը դաշն կապեց Տիգրանի հետ, որ միասին պա-  
տերազմեն Մարաց Աժդահակ թագաւորի դէմ: —

Աժդահակը մի երազ է տեսնում և պատմում իր պա-  
լատականներին. Հայաստանի մի ձիւնապատ լեռան վրայ,  
ասումէ նա. տեսայ մի գեղեցիկ կին, որ յանկարծ երեք  
կարիճ ծնաւ. առաջինը առիւծի վրայ նստած սլացաւ դէ-  
պի արևմուտք. երկրորդը ընձի վրայ նստած գնաց գէպի  
հիւսիս. իսկ երրորդը մի ամենի վիշապ սանձելով յարձակ-  
ւեց իմ տէրութեան վրայ այն ժամանակ, երբ ես զոհ  
էի մատուցանում կուռքերին: Նա կամեցաւ կործանել կուռ-  
քերը, ես միջամտեցի, բայց յաղթուելով սպանուեցայ:

Պալատականները բացատրեցին, որ Տիգրանի կողմից  
վտանգ է սպանում Աժդահակին և խորհուրդ տուին բա-  
րեկամութեամբ այդ վտանգի առաջն առնել: —

Աժդահակը մարդ է ուղարկում Տիգրանի մօտ և նրա  
քրոջը, Տիգրանունուն, կին ուզում: Տիգրանը մեծ պատուվ  
և ընձաներով ուղարկումէ Տիգրանունուն կնութեան:  
Աժդահակը Տիգրանունու սիրաը գրաւելուց յետոյ սկսաւ  
նորա նախանձը շարժել և գրգռել, թէ Տիգրան իր կնոջ

Զարուհու դրդմամբ կամենումէ գրաւել Մարաց թագաւոռութիւնը, որ ինքը Զարուհին լինի տիկնանց տիկին և քեզանից բարձր:

Տիգրանուհին հասկանումէ իր մարդու խորամանկութիւնը և հաւատարիմ մարդու ձեռով իմաց տալիս եղօրը: Երբ Տիգրանը հրաւէր ստացաւ Աժդահակից՝ տեսութեան գալու սահմանի վրայ՝ նա զօրքով ընդ առաջ ելաւ Աժդահակին, և պատերազմն սկսաւ այն ժամանակ, երբ գեղեցիկ Տիգրանուհին փախչելով աղատուել էր Աժդահակի ձեռից: Պատերազմի մէջ Տիգրանը նիզակն այնպէս է խրում Աժդահակի կուրծքը, որ ետ քաշելիս թոքերի կէսն էլ հետն է հանում, և յաղթութեամբ վերջ է դնում կոռուին, որ երկու կողմից տեսել էր բաւական երկար:

Պատերազմի ժամանակ Տիգրանին դաշնակից էր պարսից կիւրոս թագաւորը, որ և տիրեց Մարաստանին. իսկ մեր Տիգրանը 10000 գերի բերեց Հայաստան Աժդահակի կնոջ Անոյշի հետ' և բնակեցրեց Մասիսի արեւելեան կողմը, որոնցից առաջացաւ վիշապազուն կամ Մուրացան ցեղը:—

Քոյր Տիգրանուհու համար Տիգրան հիմնեց միջագետքում Տիգրանակերտ (Դեարբեաքիր) քաղաքը և նորան ընձայեց շրջակայ գաւառներով:

Տիգրան փախճանուեց 520-ին Ք. Ա.

Տիգրանի ՅԱԶՈՐԴՅԱԲՐԸ,

Տիգրանի յաջորդներից նշանաւոր էր նրա կրտսեր որդին, Վահագնը, որ սաստիկ քաջութեան համար վիշապաքաղ կոչուեցաւ: Սա այնպիսի գործեր կատարեց, որ ժո-

դովուրդը նրան աստուածների կարգը դասեց. իսկ վրացիք նրան արձան կանգնեցին և պաշտում էին:

Գողթան երգիչները նրա մարդկային ծնունդը մոռացան և այսպէս էին երգում. «ցաւի մէջ էին երկինքը, երկիրը և ծիրանի ծովը. Մի կարմիր եղեգնիկ, որ ծիրանի ծովի մէջն էր, ծուխու բոց էր արձակում. այդ բոցի մէջ մի պատանեակ էր վագում. նրա մազերը հուր էին, նրա մօրուքը բոցեղէն էր և աչքերը մէկ-մէկ արեգակ».—Սա Վահագն էր:—Տիգրանի յաջորդներից էր և Վահէ, որ 30000 հետևակ և 7000 հեծելազօրով օդնութեան զնաց Դարէն Թագաւորին ընդդէմ Ալեքսանդր Մակեդոնացու: Վահէն մեռաւ պատերազմում և 330 թուին Հայաստանն ընկաւ Մակեդոնացի աշխարհակալի ձեռը:—

ՄԱԿԵԴՈՆԵԱՆ—ՄԵԼԵԿԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ.

(330—150)

Ալեքսանդր Մակեդոնացին տիրեց Հայաստանի հարաւային և արևմտեան նահանգներին միայն: Հիւսիսային Հայաստանը, կուր և Արաքս գետերի մէջ, ինչպէս երևում է, մնաց անկախ, հայ իշխանների ձեռին, որոնց պատմութիւնը մեզ չի հասել:

Հարաւարեևմտեան Հայաստանն էլ շարունակ պատերազմների մէջ էր. նախ իշխեց Միհրան, ապա չարասիրտ Նէոպտղոմէոս, որին հալածելով Արգուարդ հայ իշխանը, տիրեց Հայաստանին: Վերջը 301 թ. Հայաստանն ընկաւ Սելևկեան թագաւորների ձեռը: Դրանք մեր երկիրը կառավարում էին հայ իշխանների միջոցով, որոնցից նշանաւոր եղաւ Արտաշէս: Նա պաշտպանեց և զարգա-

ցրեց արհեստներ, վաճառականութիւն և երկրագործութիւնը:

Արտաշէս օգտուեց Սելևկացոց թուլութիւնից և Հայաստանը ազատեց նրանց լծի տակից, դառնալով հայոց ինքնիշխան թագաւոր: Սրա ժամանակ էր, որ Կարթագենացի հանճարեղ զօրավար Աննիբալը փախաւ Հայաստան: Արտաշէսը նրան սիրով ընդունեց և Արաքսի ձախ ափին նրա խորհուրդով հիմնեց Արտաշատ քաղաքը (189 թ. Ք. ա.)

Արտաշէսին յաջորդեց Արտաւազդ: Հայերը ձանձրանալով նրա թուլութիւնից դիմեցին Պարթևներին, որ Եղան և Հայաստանին տէր դարձան:

### ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ.

ԱՐՇԱԿՈՒՆԻՔ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (150 թ. Ք. ա.)

Պարթևները մի փոքրիկ ազգ էին, որ ապրում էին Կասպից ծովի հարաւարհելեան ափերի մօտ, լեռնաստանում: Նրանք թափառական էին, բայց քաջ աղեղնաւոր ու ձիավարժ: Սելևկացոց ժամանակ Արշակ անունով մի պարթէ ապստամբեց և հետզհետէ սկսաւ իր երկիրն ընդարձակել: Նոյն ընթացքին հետևեցան և նրա յաջորդները, մինչև որ Արշակ Մեծն իր սահմանները տարածեց մինչև Հնդկաստանի ինդոս և Հայաստանի Եփրատ գետերը: Սրա ժամանակէր՝ որ Հայերը խնդրեցին Պարթևաց պաշտպանութիւնը և Արշակ Մեծն իր եղբօր Վաղարշակին ուղարկեց Հայաստան իրեւ թագաւոր և Հայաստանում 149 թ. հաստատուեց Արշակունեաց հարըստութիւնը, որ ամենափառաւորն եղաւ մեր պատմութեան մէջ:

Արշակ Հայաստանին միացրեց Ատրպատականն ու

Միջագէտքը. հիւսիսից էլ Սև ու Կասպից ծովի մէջ գրանցւած երկիրները մինչև Կովկասեան լեռները և դրանով կազմեց մի ահազին հայ-պարթէ տէրութիւն, որ պիտի դիմադրէր Սելևկեանների յարձակումներին:

Արշակ Հայաստանի թագը դնելով իր եղբօր Վաղարշակի գլուխը, դարձրեց նրան մի ինքնագլուխ թագաւոր, պատուիրելով կառավարել և ընդարձակել իր երկիրները. «զի սահմանք քաջաց զէնն իւրեանց, որքան հատանէ, այնքան ունի» (քաջերի սահմանը իրանց զէնքն է. որքան կորէ, այնքան կը տիրէ):

Սելևկեան հպատակները սիրով չուզեցան հնագանդի Վաղարշակին, այլ միանալով՝ Կապադովիկիայի իշխան Մորփիկիկէսի առաջնորդութեամբ դուրս եկան Վաղարշակի դէմ պատերազմի:

Պատերազմը տեղի ունեցաւ Փոքր-Հայքում: Մորփիւլիկէսը, որ մի քաջ մարդ էր, մի խումբ թիկնապահների հետ ճանապարհը մաքրելով հասաւ մինչև Վաղարշակի ամրացած տեղը: Սակայն հայ իշխանները փրկեցին իւրանց թագաւորի կեանքը սպանելով Մորփիւլիկէսին և հալածելով նրա զօրքը:

ՎԱՂԱՐՇԱԿԻ ՀԱՅԱՍՏԱՆԾ ԿԱՐԳԵՐԸ

Վաղարշակի իր աթուր հաստատեց Մծքին և այնուհետև ծանօթանալ ուզեց հայոց անցեալին: Նա Հայաստանի մէջ մեր պատմութեան մասին ոչ մի ստոյգ գըրւածք չգտաւ: Գիտնական Մար-Արաքին, որ ազգով ասորի էր, Վաղարշակ ուղարկեց իր եղբօր մօտ նամակով և խնդրեց, որ թոյլ տայ նինուէի գրատան ձեռագիրները քննելու: Մար-Արաք այդտեղ մի գիրք գտաւ հայոց պատ-

մութեան մասին, և արտազը էլով, բերաւ Հայաստանւ Վաղարշակը հրամայեց այդ գիրքը պահել իր դանձաանը և նրանից զանազան կտորներ փորել տուաւ արձանների վրայ:

Ծանօթանալով հայերի անցեալին, Վաղարշակն սկսաւ կարգաւորել Հայաստանը հետևելով նրա հին սովորութիւներին և կամ շատ բան էլ փոխ առնելով առելի կը թուած ազգերից:

Հայաստանի սահմանների վրայ նա նշանակեց կուսականեր, սահմանապահներ և բդեշներ: Քաղաքներում և տասններում նշանակեց դատաւորներ (իրաւաբար): Բազրատ իշխանին թագաւորներին թագ գնելու և զօրքին հրամանատար լինելու իրաւունքը տուաւ, ուստի Բազրատունիք կոչուեցան «թագադիր—ասպետ»: Աժդահակից առաջ եկած նախարարութեան, որ Մուրացան էլ կոչւում նշանակեց թագաւորի երկրորդը: Խորիսուունեաց յանձնեց իր անձի պաշտպանութիւնն ու թիկնապահութիւնը:

Վարաժանունեաց ցեղին տուաւ որսերի վերակացութիւնը, Ածրունիքորսի ժամանակ արծիւները պիտի տանէին թագաւորի առաջ. Գնթունիք ստացան հանդերձ պահելու և հազցնելու պաշտօն. Վահագնի ցեղին տալիս է քրմապետութեան իրաւունք: Արմաւիր քաղաքում կանգնում է արեի, լուսնի և իր նախնիների արձաքները, ու բոնց պաշտում էին իրեւ Աստուած:

Իր անձի համար էլ Վաղարշակ նշանակեց Քրիու յուշարաներ, որոնք զրով պիտի յիշեցնէին նըան, մինը բործերը, միւսը պատիժները: Բարի յուշարարին նա հրամայում է յիշեցնել իրան արդարն և իրաւացին, եթէ իրքը բարկացած լինի:

Արքունի տան մէջ էլ նա մացրեց կարգ ու կանոն, որովհետեւ շատ որդի ունէր, կարգագրեց, որ միայն անդրանիկը-թագաժառանգը մնայ իր մօտ, իսկ մնացեալները պիտի ապրէին Հաշտենից գաւառում:

Վաղարշակ մեռաւ Մծրին քաղաքում (127թ.) 22 տարի թագաւորելուց յետոյ:

Վաղարշակին յաջորդեց Արշակ Ա., որ թագաւորեց 13 տարի. սա խաղաղութեամբ շարունակում էր հօր գործերը, երբ սահիպուած եղաւ պատերազմի գուրս գալու Պոնտացոց գէմ: Արշակ նրանց յաջթեց և Սև ծովի եզերքը միքարէ արձան կանգնեց իրեւ յաղթութեան նշան, որ Պոնտացիք սկսան պաշտել իրեւ Աստուած:

### Ա. Բ Տ Ա Շ Ե Ս Ա.

Արշակին յաջորդեց քաջ ու պատերազմասէր Արտաշէսը (114թ.): Մինչև որա թագաւորելը պարսից թագաւորն համարւում էր առաջին, իսկ հայոց թագաւորը նրա երկրորդը: Արտաշէսն ստիպեց պարսից Արշական թագաւորին և խլեց նրանից առաջնութիւնը, և նրան դարձրեց իր երկրորդը: Իր արքունիքն էլ հաստատեց Պարսկաստան և զրամ կարել տուաւ այնտեղ, իր պատկերով: Այդ իրաւունքն էլ առաջ միայն պարթեաց թագաւորին էր յատուկ:

Նա հետզհետէ կարգաւորեց և շատացրեց իր զօրքը այնքան, որ նրանց քյած քարերից ըլուրներ էին կազմուում: Նրանց արձակած նետերը արեի լոյսը խաւարեցնում էին:

Պոնտոսի թագաւոր Միհրատին տուաւ իր աղջիկ Արտաշաման և գաշնաւորեց իր հետ: Իր որդի Տիգրանին յանձնեց Հայաստանի թագը հէնց իր իշխանութեան ժա-

մանակ, անցաւ մեծ զօրքով, յարձակում գործեց Պոնտոսի և Միջերկրանի մէջ գտնուած թագաւորութիւնների վրայ և բոլորին նուածեց:



Ա. Ռ Տ Ա Շ Ե Ս Ա.

Այնուհետեւ անցաւ Թրակիա, սպառնաց Յունաստանին և բազմաթիւ ոսկի և թանկագին արձաններ ուղարկեց Հայաստան:

Հոսմէացիք այդ ժամանակ զբաղուած էին ներքին կոխներով և պատերազմի դուրս չեկան մեր Արտաշէսի

դէմ, որ նուածել էր ամբողջ Փոքր—Ասիան: Նրանք խորամանկութեամբ կաշառեցին Արտաշէսի զօրավարներին, որոնք դաւաճանօրէն սպանեցին իրանց թագաւորին Փոքր—Ասիայում (89 թ.):

Տ Ի Գ Ր Ա Ն Բ.

Տիգրան թի ժամանակ Հայաստանի փառքն հասաւ իր ամենաբարձր աստիճանին: Հօր զահի հետ նա ժառանգել էր նրա գոռոզութիւնն ու փառասիրութիւնը: Հօր մահը լուրուն պէս նա անցաւ զօրքի գլուխը և գնաց յունաց վրայ, որոնք արդէն ոտք էին կոխել Հայաստանի սահմանները: Նրանց յաղթելուց յետոյ Տիգրան Կապադովկիան յանձնեց իր փեսայ Միհրդատին կառավարելու:

Պարսից Արշական թագաւորը լսելով Արտաշէսի մահը, կամեցաւ իր վրէժն առնել Տիգրանից և աւագութիւնը կրկին ետ խլել: Պատերազմը տեղի ունեցաւ Արաքսի ափերի մօտ. Արշական թագաւորն ընկաւ Տիգրանի զինուորների ձեռքով և Ասիայի գերիշխանութիւնը մնաց Տիգրանին:

Այդ ժամանակները Ասորոց թագաւոր Անտիոքոսը իր եզրօր հետ կոռուի մէջ էր թագի համար. Ժողովուրդը ձանձրացած այդ կոփներից դժմեց Տիգրանին: Սա էլ առանց պատերազմների տիրեց Ասորիքին, քշեց այնտեղից Անտիոքին և 22 տարի շարունակ կառավարեց նրա երկիրները:

Ասորիքից յետոյ Տիգրան տիրեց Փիւնիկէին և ապա գնաց նուածելու Պալէստինը: Երուսաղէմի Ալեքսանդրա թագուհին մեծ ընձանելով դուրս եկաւ Տիգրանի առաջ: Տիգրան Հայաստան դարձաւ բազմաթիւ հրէտ գերիներով:

Տիգրան իր գերիշխանութիւնը տարածեց ամբողջ արևմտեան Ասիայի վրայ և ամենքը նրան ճանաչեցին իրեւ թագաւորների թագաւոր:



ՏԻԳՐԱՆ Բ.

Մարք, Արաբացիք, Ատրպատականը, Վրաստանը, Սղուանք, Բարիլացիք, Կիլիկեան, Կապաղովիան և Միջագետքը հարկ էին տալիս մեր Տիգրանին:  
Պլուտարքը պատմումէ, որ թագից զրկուած չորս արքայ ծառայում էին նրան. ուրիշ չորսն էլ թիկնապահի

պաշտօն էին վարում և երբ Տիգրանը ձի էր հեծնում, երկու կողմից դնում էին ոտով:

Տիգրանի փեսայ Միհրդատը, որ Արաւշէսի մահով բաւական թուլացել էր, Տիգրանի օգնութեամբ նորէն զօրացաւ և պատերազմ հրատարակեց Հոռմայեցոց դէմ: Նա տիրեց փոքր-Ասիայի մանր տէրութիւններին և զօրք մտցնելով Յունաստան, ամբողջ Յունաստանն ապստամբեցրեց Հոռմի դէմ: Սակայն Հոռմէացիք նրա վրայ ուղարկեցին Սպալա զօրավարին, որ Միհրդատից յետ խլեց նրա նուաճած երկիրներից մեծ մասը և նրան ստիպեց մի ամօթալի հաշտութիւն կապել (86 թ.) ստանալով պատերազմի բոլոր ծախսերը:

Սակայն, Միհրդատը նորէն զօրք հաւաքեց և կրկին պատերազմել սկսաւ Հոռմայեցոց դէմ: Տիգրանն էլ նրան օգնելու համար յարձակուեց Կապաղովիայի վրա և 20,000 զերի բերաւ Հայաստան:

Հոռմայեցիք այս անգամ Միհրդատի և Տիգրանի դէմ ուղարկեցին Լուկուլոս զօրավարին:

Մի քանի ճակատամարտից յետոյ Միհրդատը Ամիսոսի մօտ սաստիկ պարտութիւն կրեց և փախաւ Հայաստան Տիգրանի մօտ (70): Տիգրանը զայրացած նրա երեսն անգամ չուզեց տեսնել, այլ միայն ազատեց նրան թշնամու ձեռից: Լուկուլոսի մարդիկն եկան և Տիգրանից պահանջեցին, որ Միհրդատին իրանց յանձնի: Տիգրանը մերժեց դէմ:

Լուկուլոսն արգէն մտել էր Միջագետք և պաշարել էր Տիգրանակերտը, ուր պահուած էին Տիգրանի գանձերը: Տիգրանի հրամանով 6,000 ձիաւոր Լուկուլոսի բանակը

ճեղքելով մտան Տիգրանակերտ և աղասեցին Տիգրանի հարստութեան մի մասը:

Տիգրան ահեղ բանակով (260000 հոգի) եկաւ և կանգնեց Լուկուլոսի դէմ. տեսնելով նրա սակաւաթիւ զօրքը, նա ասաց. «ովքէր են սրանք, եթէ դեսպաններ են, սաստիկ շատ են, իսկ եթէ պատերազմողներ, քիչ են»:— Այսպէս հպարտացած, նա անհոգ բանակ դրաւ: Լուկուլոսը նկատելով Տիգրանի անհոգութիւնը, յանկարծ վրայ՝ սոււաւ հայոց և այնպիսի շփոթ քցեց բանակի մէջ, որ Տիգրանը ժամանակ չունեցաւ իր ցրուած բանակը կարգի բերելու: Ժամանակ չկորցնելով, Լուկուլոսը պաշարեց Տիգրանակերտը և քաղաքի մէջ գտնուած յոյների մատնութեամբ քաղաքն առաւ (69 թ.):

Մի տարի յետոյ պատերազմը նորոգուեց Հայաստանում, Արածանի ափին, Արտաշատ մայրաքաղաքի մօտ: Պատերազմը երկու կողմից էլ կատաղի էր և այս անգամ Լուկուլոս ստիպուած էր ետ քաշուելու դէպի Միջագետք, ուր նա պաշարեց Մծբին քաղաքը: Տիգրան ժամանակ գտաւ և նորից նուաճեց իր կորցրած երկիրները: Միհրդատն էլ մի քանի յաղթութիւններով նորից կրկն ետ խլեց իր կորցրածը:

Այդ ժամանակ Հոռոմը Տիգրանի դէմ ուղարկեց Պոմպէոս զօրավարին: Նա մի սարսափելի ջարդ տուաւ Միհրդատին Եփրատի ափերի մօտ. Միհրդատն հազիւ աղատեց գերի ընկնելուց: Այսուհետեւ նրան դաւաճանեց իր հարազատ որդին և նա ինքնասպան եղաւ (64):

Պոմպէոսն այնուհետև իր գէներին ուղղեց Տիգրանի դէմ: Հայաստանում նրա հետ միացաւ Տիգրանի հարազատ որդին, Փոքր Տիգրանը, որ հօրը դաւաճանելով միարա-

նել էր Պարթևաց թագաւորի հետ, ընդդէմ Տիգրան Մեծի:

Տիգրան պաշարուած արտաքին ու ներքին թշնամիներից, սիրտը կոտրուած հարազատ որդու ամօթալի դաւաճանութեամբ, խոհեմութիւն համարեց հաշտութեամբ վերջացնել բանը և զուր արիւնհեղութեան տեղիք չտալ: Նա անձամբ գնաց Հռոմայեցոց բանակը: Այնտեղ նրան ընդունեցին արժանաւոր պատիւներով:

Պոմպէոսի հետ կապած հաշտութեամբ Տիգրանի ձեռքից ելան Փոքր Ասիայում նուաճած երկիրները և նրան մնաց Բուն Հայաստանը Միջագետքի հետ: Փոքր Տիգրանը, որ կամենում էր Խլել թագը հարազատ հօր գլխից և դառնալ Հայաստանի թագաւոր, անբաւական մնաց այս դաշնքից: Պոմպէոսն էլ իմանալով որ նա գաղտնի յարաբերութիւնների մէջ է Պարթևաց թագաւորի հետ, շղթայակապ պահեց նրան իր մօտ իբրև յաղթանակի զարդ:

Վթաւաճան որդին հայոց թագի փոխարէն ստացաւ Հռոմի շղթաները:

Պոմպէոսի հեռանալուց յետոյ Տիգրանը մտածեց կը ըկին ետ գարձնել կորցրած երկիրները, ուստի դաշն կապեց Պարթևաց հետ, նրանց թագաւորին վերադարձնելով նախագահութեան պատիւը: Այդ ժամանակ Եռապետները բաժանել էին Հռոմի նուաճած երկիրները և Ասիան ընկել էր կրասոսին: Պարսից և հայոց զօրքին առաջնորդում էր Սուրէն Պարթև ասպետը, որ Խառանի մօտ կրասոսի զօրքին մի սարսափելի ջարդ տուաւ և փախցրեց կոռու դաշտից:

Երբ կրասոսը Սուրէնի հրաւերով զալիս էր նրա մօտ հաշտութիւն կայացնելու, ճանապարհին խոռվութիւն պատահեց և պարթե պատգամաւորները սպանեցին կրասոսին,

իսկ Հոռմայեցի զօրքն անտէր մնացած, յիրուցան եղաւ մեծամեծ կորուստներ տալով: Այդ ժամանակ Պարթևաց թագաւորի որդին, Բակուրն, ամուսնանում էր Տիգրանի դստեր հետ և Սուրէնը հարուստ աւարների հետ իբրև յաղթանակի ընձայ հայոց արքունիքն ուղարկեց սպանուած կրասոսի գլուխը (53 թ.)

Կրասոսի տեղ շուտով Տիգրանի գէմ դուրս եկաւ կասիոս: Տիգրան արդէն ծերացել էր և պարսից օդնական բանակն յանձնեց Բարզափրան Ռշտունի նախարարին: Սա աջորութեամբ առաջ գնաց և Անտիոքի մէջ պաշարեց կասիոսին, որն ազատուեց միայն Կիլիկիայի հիւպատու Յիցերոնի օգնութեամբ: Երկար կոփւներից յետոյ մի վերջնական պատերազմում հայ սպարապետը յաղթելով, կրկին նուաճեց Ասորիքն ու Փիւնիկէն: Բարզափրան այնուհետեւ Պալեստին գնաց՝ գնէլ Գնունի զօրավարի ձեռքով Երուսաղէմին տիրեց և բազմաթիւ գերիներով ու տարով վերաբարձաւ Հայաստան, զօրքի հրամանատարութիւնը տալով Բակուրին:

Հոռմայեցիք նորէն շարունակեցին իրանց կոփւները միացեալ հայերի և պարթևների գէմ, սակայն Տիգրանը, որ այս պատերազմները կաղմակերպողն ու կառավարողն էր, արդէն ուժասպառ ու ծերացած 53 տարուայ թագաւազից, մեռաւ (36 թ.) իր թագը թողնելով Արտա-

### Ա. Բ Տ Ա. Ի Ա. Զ Դ Դ

Արտաւազդը ոչ հօր փառասիրութիւնն ունէր, ոչ էլ նրա քաջութիւնը, այլ զբոսասէր և որկրամոլի մէկն էր: Հոռմէացի Անտոնիոս զօրավարին նա հաշտութիւն խօսեց և խոստացաւ նրան օգնել ընդդէմ Պարթևաց: Սակայն իր խոստումը չկատարեց և խարէութեամբ ման ածեց Հոռմի Լէկէոնները անծանօթ ճամբաններով, մինչեւ որ մի յարմար ըոսէի հեռացաւ Անտոնիոսից: Անտոնիոս ստիպուած էր ետ դառնալ մեծամեծ վնասներով: Արաքս գետն անցնելիս նա արդէն կորցրել էր 24,000 մարդ և հազիւ իր բանակի մնացորդով նա Միջագէտք հասաւ, մտածելով վրէժը մի այլ անգամի թողնել:

Հայ զօրքի ստիպմամբ թուլամորթ Արտաւազդը կովկասեան ազգերից զօրք հաւաքեց և Միջագէտքից դուրս քշեց Հոռմայեցիներին:

Անտինիոս այս բանից աւելի ևս զայրացած Արտաւազդի վրայ եկաւ մեծ զօրքով և յաղթեց նրան: Հայերը ետ քաշուեցան: Անտոնիոս ամեն հնար գործ գրեց Արտաւազդին իր բանակը բերելու, բայց հայ-թագաւորը նըրան չէր հաւատում: Վերջը, երբ Անտոնիոս մտաւ Հայաստան, Արտաւազդ խարուած նրա խոստումներից, գնաց Անտոնիոսի մօտ: Անտոնիոս Արտաւազդին ման ածեց հայոց բերգերը, նրանց գանձերը խլելու համար, բայց հայերը չէին խարւում:

Անտոնիոսն Արտաւազդին ոսկի շղթաներով կապեց և տարաւ Ալէքսանդրիա, Կէոսպատրա թագուհուն որպէսպարզե: Վերջինս գլխատել տուաւ Արտաւազդին (31 թ.):

Արտաւագդից յետոյ, ինչպէս երևում է, Հայաստանն առապարէզ է դառնում անընդհատ պատերազմների: Մի կողմից Հռոմի՝ լէգէոնները, միւս կողմից Պարթև դօքերը շարունակ ասպատակում էին Հայաստանը: Նրանցից ամեն մինն աշխատում էր իր կուսակից մարդու յանձնել Հայաստանի թագը, իր երկրի սահմանները թշնամուց ապահովելու համար:

Այդ պատերազմներն էին երկի պատճառը, որ մի շարք թագաւորներ յիշում են Հիւսիսային Հայաստանում, գըլխաւորապէս արտաքին պատմիչների կողմից. մի այլ շարք էլ հարաւային Հայաստանում,—Միջագետքում, որոնց մանրամասն պատմութիւնը մեզ աւանդում են աղքային պատմիչները:

Այսպէս, Արտաւագդից յետոյ, Պարթեների օգնութեամբ հիւսիսային Հայաստանում թագաւորեց նրա որդին, Արտաշէս: Իսկ Միջագետքում, Մծրին քաղաքում թագաւոր նատեց Արտաւագդի հօրեղբօր որդին, Արշամ (33—3 Քր. առ.): Սա սկսեց հալածել Բագրատունի իշխաններին, ըստիպելով թողնել հրէից կրօնը և դառնալ Հեթանոս: Արշամ հարկատու էր Հռոմին:

Հեթաստանի Հերովդէս թագաւորը բանուորներ պահանջեց Արշամից Անտիոք քաղաքում աշխատելու: Արշամ մերժեց նրա պահանջը և գանգատ ուղարկեց Հռոմ, Օգոստոս կայսեր: Կայսրը, սակայն, Հեթովդէսի կողմը բռնեց և Արշամ ստիպուած էր վերջինիս պահանջը կատարել:

### Ա Բ Գ Ա Ր

Արշամին յաջորդեց Արգար (3 թ. Քրիստ. առաջ): Արա ժամանակ Հռոմի գործակալները Օգոստոս կայսեր

պատկերը բերին և դրին հայոց մեհեաններում: Հերովդէսը պահանջեց, որ իր պատկերն էլ կայսեր պատկերի հետ դրուի: Արգարը մերժեց այս պահանջը: Հերովդէս մի բանակ ուղարկեց նրա վրայ, որը սաստիկ պարտութիւն կրեց: Բարեբաղդաբար Հերովդէս մեռաւ և չկարողացաւ վրէժ առնել Արգարից:

Հռոմում չէին մոռացել այս դէպքը և վրէժ առան Արգարի դեսապաններին անպատուելով:

Արգարն էլ պատրաստութիւն էր տեսնում ապստամբելու և Հռոմի լուծից ազատուելու: Ուստի նա իր մայրաքաղաքը Մծրինից տեղափոխեց Եղեսիա և սկսեց այս քաղաքն ամրացնել: Մտադիր լինելով Պարթեաց հետ միանալու, նա գնաց Պարսկաստան և հաշտեցրեց Արշաւիր թագաւորի որդոց, որոնք կուտում կին գահի համար, բայց ապստամբութեան գործը զլուխ չեկաւ:

Արգարը Պարսկաստանից վերադարձաւ ծանր հիւանդ: Այդ ճամբորդութիւնը կասկածի մէջ քցեց Հռոմայեցոց: Արգարը դեսպաններ ուղարկեց Հռոմի գործակալ Մարինոսի մօտ, որը դեսպաններին ընդունեց մեծ պատուվ:

Երուսաղէմից անցնելով, Արգարի դեսպանները տեսան այն հրաշքները. որ գործում էր Յիսուս, և պատմեցին թագաւորին:

Արգարն իր Անանէ սուրանդակի ձեռքով նամակ ուղարկեց և խնդրեց Յիսուսին, որ գայ և իր հիւանդութիւնը բուժէ: Յիսուս Թումա առաքեալի ձեռքով պատասխանեց, թէ նա չի կարող գնալ Արգարի մօտ, այլ համբառնալուց յետոյ կուղարկէ իր աշակերտներից մինին, որ կրուժէ Արգարին:

Իրաւ, Քրիստոսի Համբարձումից յետոյ Թաղէսս ա-

ուաքեալը եկաւ Միջագետք, բուժեց Արգարի հիւանդութիւնը և մկրտեց նրան իր պալատականների հետ։ Այսուհետեւ Ադրէ պալատականին ձեռնադրեց եպիսկոպոս և թողնելով իր տեղը. գնաց Հայաստան, քարոզելու քրիստոնէութիւնը։

Այսպիսով Արգար առաջին թագաւորնէր որ, որ ընդունեց քրիստոնէութիւն։ Այսուհետեւ նա նամակ գրեց Տիրերիս կայսեր, պարսից թագաւոր Արտաշէսին և Ասորեստանի թագաւոր Ներսէնին. յորդորելով նրանց, որ քրիստոներին չհարածեն և Քրիստոսի հաւատն ընդունեն։

Նա մեռաւ այս նամակների պատասխանը չստացած 35 թ., Քրիստ. յետոյ,

### Ա.Ն.Ա.Ե.Ո.Ի.Ն (35 թ.)

Անանուն թագն ստանալուն պէս հալածանք սկսեց քրիստոնէութեան դէմ. մեհեանները բաց արաւ և պահանջեց Ադրէից, որ քրիստոնէութիւնը թողնէ և սկսէ առաջուայ նման թագ պատրաստել թագաւորի համար։ Երբ Ադրէն մերժեց թագաւորի պահանջը և քարոզում էր ժողովրդին, սպանուեց արքայական զինակրի ձեռքով։

Հայաստանի Շաւարշան գաւառի կառավարիչ էր Սանատուկը, Արգարի քրոջ որդին։ Սա աւելի կատաղի թըշնամի գուրս եկաւ ընդդէմ քրիստոնէութեան քան Անանունը։ Սանատուկ նահատակել տուաւ թագէոս առաքեալին և Սանդուխտ կոյսին, որ իր հարազատ գուստըն էր։ Սանատուկը Արշամից ապստամբելով իրան թագաւոր հըրատարակեց հիւսիսային Հայաստանում և ապա զօրքով դիմեց Անանունի վրայ։ Այս վերջինը իր պալատը նորոգելիս մի սիւն ընկաւ վրան և ջախջախեց նրա ոտները։

Եղեսացիք մարդ ուղարկեցին և խոստացան Սանատուկին յանձնել քաղաքը, միայն նա ձեռ չ'տայ նրանց կրօնին։

Սանատուկ խոստացաւ, բայց խոստումը չկատարեց։ Կոտորել տուաւ Արգարի ցեղը բացի աղջիկներից և Հեղինէ թագուհուց։ Վերջինս Երուսաղէմ գնաց և իր ամբողջ գանձը բաժանեց աղքատներին սովի ժամանակ։

### Ե.Ր.ՈՒ.Ի.Ա.Ն.Դ

Հիւսիսային Հայաստանի կառավարութիւնը Սանատուկ յանձնել էր Երուանդ իշխանին, որ մօր կողմից Արշակունի էր։ Երբ որսի ժամանակ Սանատուկ պատահմամբ սպանուեց, Երուանդը զրաւեց նրա թագը, բայց Բագրատունի իշխաններից ոչ մինը յանձնառու չեղաւ նրա զլիսին թագ դնելու։

Երուանդ իր թագն ապահովելու համար կոտորել տուաւ Սանատուկի ցեղը։ Ազատուեցաւ միայն Արտաշէս մանուկը, որին պահում էր Սմբատ Բագրատունին, հովինների մօտ, որ Սանատուկի ձեռը չընկնի, մինչև որ առիթ գտաւ անցնելու Պարսից սահմանը։

Պարթևաց Դարէն թագաւորը սիրով ընդունեց Արտաշէսին և պատուվ պահում էր իր պալատում։

Երուանդ գեսապանների ձեռքով աշխատում էր հաւատացնել պարսից թագաւորին, որ Արտաշէսը հովուի որդի է և ոչ թէ Սանատուկի։

Բայց նրա բոլոր փորձերը զուր անցան։ Սմբատից վրէժ առնելու համար կոտորել տուաւ նրա թողած պահապաններին և բանդարկեց նրա երկու աղջկանը։

Հոռմի հետ դաշն կապեց Երուանդ և Միջագետքը

յանձնելով նրանց, մայրաքաղաքը տեղափոխեց Արմաւիր:

Որովհետև Արմաւիրն անպարիսպ էր, Երասխի ափին հիմնեց Երուանդաշատ քաղաքը, պարիսպով պատեց, շինեց ամուր միջնաբերդ, այնտեղ էլ բնակութիւն հաստատեց:

### Ա. Բ Ա. Շ Է Ս Բ.

Սմբատ Բագրատունին հաւատարիմ ծառայութեամբ գրաւեց Դարէն թագաւորի սիրաը այնպէս, որ երբ Արտաշէս մանուկը բաւական մեծացաւ, Դարէն զօրք տուաւ Սմբատին, որ գնայ Արտաշէսի գահը յետ խլէ:

Երուանդը պատրաստուեց և հայ ու վրացի զօրքերով դուրս եկաւ Սմբատի դէմ: Նախարարներին էլ մեծամեծ պարզեներ տուաւ Երուանդ, որ իր կողմը պահեն, բայց իւզուր. հէնց որ Սմբատն ու Արտաշէսը Հայաստան մտան, նախարարների մեծ մասն անցաւ նրա կողմը:

Հակառակորդներն իրար հանդիպեցան Ախուրեան գետի մօտ: Որպէս զի յաղթութիւնն ապահով լինի, Արտաշէս մարդ ուղարկեց Մուրացան նախարարի մօտ, և խոստացաւ թագաւորից յետոյ երկրորդը լինելու պատիւը նրան թողնել, եթէ նա անցնի իր կողմը:

Արգամը յանձն առաւ և պատերազմը սկսուելուն պէս մի կողմ քաշուեցաւ, թողնելով Երուանդին մենակ: Այս տեսնելով Երուանդին դաւաճանեցին մնացեալ հայ նախարարներն էլ: Երուանդը մնաց միայն Վրացի վարձու զօրքով, որոնք թէպէտ քաջութեամբ կոխւ մղեցին, բայց Սմբատի յարձակմանը դիմանալ չկարացին: Մի քանի քաջէր Երուանդի կողմից յարձակուեցան Արտաշէսի վրայ և կամենում էին նրան սպանել, բայց Արտաշէսի կաթնեղ-

բայրը, Գիսակ, ազատեց նրան կորցնելով իր դէմքի կէսը:

Երուանդը փախաւ և ամրացաւ Երուանդաշատ քաղաքում: Սմբատ հեակեց նրան մինչև քաղաքի դռները: Հետեալ օրը հասաւ Արտաշէս գլխաւոր բանակի հետ: Զօրքը, Արտաշէսի հրամանով գոռում էր, «Մար ամատ», այսինքն «Մարն (հովիւր) եկաւ»,» յիշեցնելու համար Երուանդի սուտը, թէ Արտաշէս հովուի որդի է:— Թեթև յարձակումից յետոյ քաղաքն անձնատուր եղաւ և Երուանդ սպանուեց մի զինուորի ձեռքով:—

Արտաշէս վեհանձն վարուեց իր թշնամու զիակի հետ. պատուով թաղել տուաւ, և վրան արձան կանգնեց, իբրև Արշակունու:

Սմբատ Երուանդի գանձատան մէջ գտնելով Սանաւորուկի թագը, հանդիսաւոր կերպով զրեց Արտաշէսի զրկին (85 թ.) և պսակեց հայոց թագաւոր:

Արտաշէս հօր գահին տիրանալով, մտածեց իր բարեկամներին վարձատրել: Պարթև զօրքին առատ պարզեներ տալով, վերադարձրեց իրանց երկիրը: Արգամին թագաւորի երկրորդը շինելուց յետոյ, իրաւունք տուաւ երկու ականջին օղեր, մի ոտին կարմիր կօշիկ կրելու և ոսկէ գգալ ու պատառաքաղով ճաշելու:

Սմբատին յանձնեց ամբողջ զօրքի սպարապետութիւնը և երկրի վերակացութիւնը: Գիսակի որդուն նախարարների կարգը մտցրեց և Դիմաքսեան անուանեց, հօր քաջագործութեան համար: Դարէն թագաւորին էլ մեծամեծ ընձաներ ուղարկեց Սմբատի ձեռով: Արտաշէս իրան մայրաքաղաք ընտրեց Արտաշատ քաղաքը, որ նորոգեց և բաղմաթիւ շինութիւններով հարստացրեց:

Հոռմայեցիք, որ Երուանդին ոչ մի օգնութիւն չը-

հասցրին, նրա ամկումից յետոյ Արտաշէսից պահանջեցին հարկը, որ պատերազմից խուսափելով, տուաւ: Հազիւ Հըռումի գօրքերը ետ քաշուեցան Հայաստանի սահմաններից, Աղանները միացած կովկասեան լեռնականների հետ, ար-



Ս Ա Թ Ե Ն Ի Կ

շաւեցին Հայաստան: Արտաշէսը նրանց մի լաւ ջարդեց, գերի առաւ նրանց թագաւորի որդուն և հալածեց կուրի ձախ ափը: Ալաններն առաջարկեցին մշտական դաշն կապել հայոց հետ և Հայաստանն այլ ևս չասպատակել, եթէ

իրսնց թագաւորի որդուն ետ ստանան: Երբ Արտաշէս չը համաձայնեց, գետի ափը գուրս եկաւ Ալանաց թագաւորի աղջիկը, Սաթենիկ, թարգմանի բերանով սկսեց խօսել Արտաշէսի հետ, համոզելով ետ տալու իր եղբօրը:

Արտաշէս շատ հաւանեց Սաթենիկին և ինչպէս երգում էին Գողթան երգիչները, «հեծաւ իր սկ ձին, և արծուի նման սրանալով գետի մէջ, առաւ ոսկէօղ շիկափոկ պարանը և այն քցելով օրիորդի փափուկ մէջքը, փախցըրեց նրան գետի այս ափը, հարսանիք սարքեց և ամուսնացաւ Սաթենիկի հետ»:

Արտաշէսն իր երկարատև թագաւորութեան՝ ընթացքում աշխատում էր երկիրը խաղաղ պահել և արուեստներն ու առևտուրը ծաղկեցնել: Հայաստանի անքնակ աեղերը նա բնակեցրեց դրսից բերած գաղթականներով: Երբ Սաթենիկի հայրը մեռաւ և երկրի մէջ խոռվութիւն ծագեց, Արտաշէս Սմբատին գօրքով ուղարկեց Ալանաց երկիրը, որ հանգարտացրեց և թշնամիներից շատ գերի բերեց Հայաստան: Այդ գերիներին Արտաշէս բնակեցրեց Շաւարշան գաւառում, որ յետոյ Արտազ կոչուեցաւ գաղթականների երկրի անունով:

Կասպիական երկիրներից էլ Սմբատ բազմաթիւ գերի բերաւ որ նոյնպէս բնակեցրեց Հայաստանի ամայի տեղերում:

Երկրի զանազան մասերը Արտաշէս սահմաններով բաժանեց միմեանցից, սահմանների վրայ քառակուսի քարեր դնելով:

Կամուրջներ շինեց, գետերն ու ծովերը ճանապարհի դարձրեց, ամեն կերպ նպաստեց երկրի մշտակելուն և արհեստների տարածելուն:

Արտաշէսի ժամանակ հայերը սովորեցան զրի գործածութեան և օրերը, շաբաթներն, ամիսներն ու տարիները հաշվելուն:

Այս ամենի համար ժողովուրդը սաստիկ սիրեց իր թագաւորին և անմահացրեց նրան իր երգերի մէջ, զովելով, որ Արտաշէսի ժամանակ մի կտոր հող անգամ անմըշակ չէր մնացել Հայաստանում և պարապ ու անդործ մարդ չկար իսկի:

Անբաղդ էր Արտաշէսը միայն ընտանեկան կողմից: Նրա աւագ որդին, չար ու նախանձու Արտաւազդը դադր չէր տալիս հօրը:

Նա գանգատուեց Արդամից և խլեց նրանից երկրորդական գահի իրաւունքը:

Մի անգամ Արտաշէս ճաշի էր հրաւիրուած Արդամի մօտ. արքայորդիք աղմուկ բարձրացրին թէ նա ուզում է Արտաշէսին սպանել և ծերունի Արդամի մազերն ու մօռուքը քաշեցին: Վրդովուած թագաւորը Մաժան որդուն ուղարկեց զօրքով Արդամի վրայ, որ նրա ցեղը ջնջէ: Արտաւազը խլեց Արդամից նախիջևան քաղաքը և Արտափի հիւսին ընկած կալուածները: Արդամի որդին հակառակ էր և Արտաւազդ ընաշխնջ արաւ Արդամի ցեղը բոլորովին, գրաւելով նրա կայքն ու կալուածները:

Արդամից յետոյ Արտաւազդի նախանձի տուարկան Սմբատ Բագրատունին դարձաւ, որին նա ուզում էր սպանել: Սմբատ վեհանձնօրէն հեռացաւ Տմորիք, զօրքի սպառապետութիւնն էլ թողեց Արտաւազդին:

Որովհետև Արտաշէսի միւս որդիքը նախանձում էին Արտաւազդին, Արտաշէս Վրոյր որդուն արքունիքի հազարեաւ, իսկ Մաժանին քրմապետ կարգեց:


Բոլոր զօրքն հին սովորութեամբ չորս մաս բաժանեց. արևելեանն յանձնեց Արտաւազդին, արևմտեանը Տիրանին, հիւսիսայինը Զարէհին և հարաւայինը Սմբատ Բագրատունուն: Որովհետև Արտաշէս պայմանած հարկը չտուաւ, պատերազմ ծագեց Հռոմայեցիների հետ: Ակրպաւմ հայերն աջողութիւն ունեցան և յաղթութիւն տարան Սմբատի ջնորհիւ: Բայց երբ Տրայանոս կայսր դառնաւ և եկաւ Պալեստինը նուածեց, Արտաշէս հաշտութիւն ինսպրեց, վճարելով պահած հարկերն ամբողջովին և այնուհետև շարունակ դաշնակից մնաց: Հումին:

Ազրիանոս կայսեր առաջարկութեամբ Արտաշէս գընում էր Պարթեաց երկիրը դաշն կապելու, որ ճանապարհին հիւսնողացաւ Բակուրակերտ աւանում: Մարդ ուղարկին երիզայ աւանը, որ Անահիտ գիցուհուց կեանք և կեցին Երիզայ աւանը, որ ճանահիտ գիցուհուց կեանք և կեցին Խնդրէ. Մինչև նրա գալուստը Արտաշէս մեռը ուժումն ինսպրէ. Գեղեցիկ է նկարագրում նրա թաղումը Արիստոն նում է: Գեղեցիկ է նկարագրում նրա թաղումը Արիստոն Փելլացին, որ ճամբորդում էր Արտաշէսի հետ իբրև քարփելլացին, որ ճամբորդում էր Արտաշէսի հետ իբրև քարփելլացին, որ ճամբորդում էր Արտաշէսի հետ իբրև կեանքից:

Ժողովուրդը մեծ պատիւներ տուաւ. սիրելի թագաւորի գիտակին: Դագաղը ոսկեղէն էր, գահոյին և անկրողին բեհեղ, պատմուճանը ոսկեթել, զլիին թագ էր զրած, ոսկէպատ զէնքն առաջին, զահի չորս կողմը որդիքը և ազգականներն էին կանգնած և ապա զինուորական պաշտօնեանները, նահապետները, նախարարները, և զինուորական գնդերը կազմու պատրաստ, որպէս թէ պատերազմ էին զնում:

Առաջնից պղնձեայ փողեր էին նուազում, իսկ յետից զնում էին երգող կոյսերի խումբերը ու հագած,

դրանց յետևից էլ ժողովրդի բաղմութիւնը։ Այսպիսի հանդիսով տարան ու թաղեցին սիրելի թագաւորին, որի ժամանակ շատերն ինքնասպանութեամբ վերջ դրին իրանց կեանքին (131 թ.)։



ԱՐՏԱԿԱԶՄ (131 թ.)

Արտաշէսին յաջորդեց նրա փառասէր ու նախանձուս որդին, Արտաւազու Սա իր բոլոր եղբայրներին քշեց Այ-

րարատ գաւառից Աղիովիտ և Առքերան գաւառները, պահելով իր մօտ միայն Տիրանին, իբրև յաջորդ։

Սա կարճ ժամանակ թագաւորելուց յետոյ, որսի յետևից երիվարը քշելով ընկնում է մի խորխորատ և մեռնում։

Արա մասին է, որ զողթան երգիչները առասպելաբանել են. թէ հօր մահուան ժամին, երբ ժողովրդից շատերն իրենց կոտորել են, Արտաւազու գանգատուել է ասելով։

«Դու գնացիր և ամբողջ երկիրը հետդ տարար, ես աւերակներին ոնց թագաւորեմ».—Որի համար Արտաշէս նրան անիծում է։ «Եթէ դու որսի գնաս ազատ Մասիսի վրայ, քեզ թող բռնեն քաջերը, տանեն Ազատ Մասիսը, այնտեղ մնաս, ու էլ լոյս չտեսնես»։

Պատմում են, որ նա մինչև այսօր պահուած է Մասիսի մէջ, մի այրում, երկու շները հանապազ կրծում են նրա շղթաները որ ազատեն տիրոջը, բայց երբ ուրբաթօրը դարբինները ծեծում են սալը մուրճով, նրա շղթաները ամբանում են։

Արտաւազուին յաջորդեցին իր եղբայրները, նախ Տիրան Ա. (131—151) ապա Տիգրան գ. (151—193), Սրան էլ յաջորդեց իր որդին, Վաղարշ (193 թ.) որ հիմնեց Վաղարշաւան քաղաքը Մուրցի և Երասմի խառնուելու տեղը։ Վարդպէսի աւանն էլ պատեց ամուր պարիսպներով և անւանեց Վաղարշապատ։ Սրա ժամանակ հիմնային վայրենի ազգերը, խազիրները և բասիրները յարձակուեցան Հայաստանի վրայ. Վաղարշ քաջութեամբ հալածեց նրանց. բայց զոհ գնաց թշնամու նետին։

Հօր մահուան վրէմն առաւ Խոսրով Ա. (213), որ զօրքի գլուխն անցնելով, անցաւ Կովկասը, յարձակուեց լեռ-

նակաների վրայ, յաղթեց նրանց, մի արձան կանգնեց ի նշան այդ յաղթութեան և ետ գարձաւ հետը բերելով բազմաթիւ պատանդ:

Սրա ժամանակ էր, որ Պարսկաստանում Պարթև իշխանութիւնը թուլացաւ և թագն անցաւ Սասանեան Արտաշրի ձեռքը (226), որը հիմք դրեց Սասանեան իշխանութեան Պարսկաստանում: Խոսրով Ա. շտապեց իր ազգականին օգնութիւն հասցնելու, բայց արդէն ուշ էր. Արտաւան Արշակունին սպանուել էր:

Խոսրով այնուհետեւ Հռոմայեցոց օգնութեամբ պատերազմեց Արտաշրի հետ, յաղթութեամբ հասաւ Տիգրոն և Արտաշրին փախցրեց մինչև Հնդկաստան:

Արտաշեր խորամանկութեան դիմեց: Նրա խորհրդով Անակ Պահլաւունի իշխանը որպէս փախստական և հալածուած Արտաշրից, իր ընտանիքով ապաւինեց Խոսրովի մօտ: Խոսրով սիրով ընդունեց նրան որպէս իր ազգականին, ուտի գաւառում:

Գարնանը, որսի ժամանակ, Անակը մի կողմ կանչեց Խոսրովին և մահացու վերք տուաւ նրան:

Նախարարները հասան նրա յետեից և Արտաշատի կամուրջի վրայ բռնելով, գետը նետեցին և նրա ցեղն էլ որի անցրին մեռնող թագաւորի հրամանով (261):

Ազատուեցաւ միայն Գրիգոր անունով մի արու զաւակ իր սանառուի ձեռքով:

Խոսրովի մահից յետոյ հայ նախարարները Փռիւզացի գորքերի օգնութեամբ փորձ արին դիմադրելու Արտաշրի յարձակման, բայց պարտութեամբ ցըռեցան և Արտաշեր տիրեց Հայաստանին: Ազատուեց Տրդատ թագաւորազնը, որին Արտաւազդ Մանդակունին փախցրեց Հռոմ: Իսկ Օտա-

Ամատունի իշխանն ազատեց Խոսրովիդուխտ արքայադրստեր, որին արքայական գանձերի հետ պահում էր Անի ամբոցում:

Այսպիսով Հայաստանը գարձաւ պարսից մի նահանդ:

Տրդատը մեծանում և աճում էր Հռոմում, ուր նա քաջութեան և ուժի մեծ համբաւ հանեց: Մի անգամ վայրենի ցուլի պողերից բռնելով դուրս պոկեց և վիզը ուռբելով սպանեց: Մի այլ անգամ հակառակորդն առաջ անցնելու համար նրան ցած նետեց կառքից. Տրդատը արկացած այնպէս պինդ բռնեց նրա կառքի յետեից, որ ձիերին կանգնեցրեց:

Պատերազմների մէջ էլ նա մեծամեծ քաջութիւններով զարմանք էր պատճառում Հռոմայեցոց: Մինչ Հռոմայեցի կատաղած գօրքը սովից յարձակուեց և սպանեց Պրոբոս կայսեր, Տրդատ մենակ կանգնած իր բարեկամ Լիլիանոսի դրան առաջ, թոյլ չտուաւ, որ նրան որևէ վասա հասնի:

Պարաից պատերազմում երբ կայսրը յաղթուեց և լէգէոնները փախան, Տրդատ ետ մնաց, որովհետեւ իր ձին վիրաւորուել էր: Եփրատին համնելով իր հագուստն ու ձիու սարքը մէջքին, լող տալով անցաւ Եփրատ գեար:

Գօթաց Հռոմ թագաւորի հետ էլ մենամարտեց, և յաղթելով գերի բերաւ նրան Դիոկղետիանոս կայսեր մօտ:

Այս քաջութիւնների համար նա սիրելի էր դարձել Դիոկղետիանոս կայսեր, որ կամենալով կրկին Հայաստանը նուածել, գօրք տուաւ Տրդատին պարսից գէմ պատերազմելու:

Փախստական նախարարներից շատերն ուրախութեամբ դիմաւորեցին Տրդատին կեսարիա և միացան նրա հետ:

Օտա Ամասունին նրա առաջ բերեց Խոսրովիդուխտ քըրոջը և թագաւորական գանձերը։ Տրդատ նրան նշանակեց տէրութեան հազարապետ, իսկ Արտաւազդ Մանդակունուն յանձնեց զօրքի սպարապետութիւնը։

Հայ և Հռոմէացի զօրքերով Տրդատ ջարդեց ու հաւածեց պարսիկներին, կրկին տիրելով իր հայրենի թագին և մեծ ուրախութիւն պատճառելով հայ ժողովրդին։

Հետեւալ տարին նա արշաւեց Պարսկաստան և իր անձնական քաջութեամբ սարսափ ազդեց թշնամիներին։ Մի անգամ թշնամիները շրջապատեցին նրան և նետերով բազմաթիւ վէրք հասցըին ձիուն որ գետին վլորուելով, ցած քցեց արքային։ Տրդատ աներկիւղ վեր թռչելով, հետիուն սկսեց հալածել թշնամիներին և խլելով նրանցից մինի ձին, հեծաւ ու սկսեց կոտորել նրանց։

Հայաստանը թշնամիներեց մաքրելուց յետոյ, Տրդատ կամեցաւ ամուսնանալ և Աշխատար իշխանի գուստը Աշխինին, որ գեղանի և բարձրահասակ էր Տրդատի պէս, կին ուզեց։ Նորան զբելով Արշակունի, Տրդատ նորա զըլխին թագ դըրեց և կարգեց հայոց թագուհի։

### ՀԵԹԱՆՈՍ ՀԱՅՈՑ ԿՐՈՆԸ

Հայկագանց ժամանակ հայերը մի պարզ ու բնական կրօն ունէին. արևն էր զբանց պաշտամունքի դիմաւոր առարկան, որ համարւում էր կեանքի հիմքը, մարդու և ընութեան կեանք տուողը.—«Արեւս վկայ, քու արեւ, նըրա արեւը խաւարեց» մինչեւ այսօր պահուած ու սովորական են ժողովրդի բերանում։ Լոյսը համարում էին բազդ բերկրութիւն. — «աշքդ լոյս, աշքի լուսով մնաս», ասում

են այսօր, երբ մի ուրախալի անցք է պատահում։ Ըսդհակառակը խաւարը համարւում էր անբաղդութիւն։

«Նրա օրը խաւարեց, նրա օրը սևացաւ», անբաղդութեան նշաններ են հէնց այսօր։

— Ուրեմն լոյսը—բազդ էր. խաւարն-անբաղդութիւն, արեւը կեանք։

Հին հայերը անտառների սօսաւիւնից գուշակութիւններ էին անում։ Սօսեաց անտառին էր նուիրուած Անուշաւանը, որ այդ պատճառով Սօս կոչուեցաւ։ Մի տեսակ աստուածներ էլ կային, որոնք Արլեզ էին կոչւում և լիգում էին պատերազմում ընկած վիրաւոր քաջերին և առողջացնում նրանց։

Այս պարզ ու նախնական կրօնը բաւական ճոխացաւ հարևան պարսիկների, ասորիների և ապա յոյների ազգեցութեան տակ, այնպէս որ բնութեան լուսաւորների հետ, հայերին այնուհետեւ տեսնում ենք երկրպագելիս և՛ կուռքերի ու արձանների։

Աստուածների հայրն համարւում էր «արին Արամազդ», որի արձանը գտնւում էր Անի ամբոցում։ Երիգայում գտնւում էր Անահիտ դիցուհու արձանը, որ կոչւում էր «ոսկիամայր, ոսկիածին, և համարւում էր կեանք ու կեցուցիչ հայոց աշխարհի»։ Սա Արամազդի գուստըն էր։

Արամազդի միւս գատեր անունն Աստղիկ էր, որ գեղեցկութեան աստուածուհի էր։ Սորա արձանը գտնւում էր Տարօն գաւառի Աշտիշատ աւանում։ Այստեղ էր և Վահագնի արձանը։ Վահագն համարւում էր քաջութեան աստուած և կոչւում էր վիշապաքաղ։ Սա Աստղիկի ամուսինն էր

## ԵՐԿՐՈՒԴ ՇՐՋԱՆ

Քրիստոնէութեան մուտքն Հայաստան:

ՏՐԴԱԾ ԵՒ Ա. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՀՈՐԻԶ

Աբգարն առաջին թագաւորն էր հայոց մէջ, որ քրիստոնէութիւն ընդունեց: Թէև, ինչպէս տեսանք, նրա յաջորդները հալածանք բարձրացըին քրիստոնէութեան դէմ, բայց և այնպէս բազմաթիւ քրիստոնէաներ կային Հայաստանում, որոնք յայտնի կամ ծածուկ գաւանում էին երկնային Փրկչի կրօնը: Խոսրով Ա-ի օրով, ինչպէս և Տրդատի ժամանակ այնքան շատ էր սրանց թիւը, որ թէ հայրը և թէ որդին մահուան պատիժներով, հալածանքներով ու հրովարտակներով բռնանում և հալածում էին քրիստոնէաներին: Այս հալածանքը տեսք մինչև Տրդատի քրիստոնեայ դառնալը լուսաւորչի ձեռքով:

Գրիգորն Անակ իշխանի որդին էր. նա ծնաւ Վաղարշապատ 257-ին. երեք տարեկան էր, որ դաւաճան հօր ընտանիքը սրի անցըրին, որից ազատուեց միայն Գրիգորը, իր առնտուի հետ, Սովիա անունով: Գրիգորին տարան կեսարիա, ուր նրան մկրտեցին և մեծացրին իբրև քրիստոնեայ: Նա ուսաւ յոյն և ասորի դպրութիւն: Երբ չափահաս դարձաւ, ամուսնացաւ մի յոյն աղջկայ հետ, որից երկու գաւակ ունեցաւ. Արիստակէս և Վրթանէս: Երեք տարուց յետոյ նրանք սիրով բաժանուեցան միմեանցից, որ ծառայեն. Աստծուն. Գրիգորը Արիստակէսին յանձնեց դայակների և ինքը զնաց Տրդատ թագա-

ւորի մօտ, որ հաւատարիմ ծառայութեամբ քաւէ իր հօր, Անակի գործած մեղքը:

Իսկ Գրիգորի կին Մարիամն, առնելով փոքր որդուն, Վրթանէսին, մտաւ կուսանոց:

Երբ Տրդատը Հայաստան գալով զոհ էր մատուցանում Անահիտ դիցուհուն, հրամայեց, որ Գրիգորն էլ պըսակներ մատուցանէ նոյն դիցուհուն: Գրիգորն ընդդիմացաւ: Այսուհետև ոչ Տրդատի պատուէրն ու պատիժը, ոչ տուած տանջանքն ու չարչարանքները չկարողացան ըստիպել Գրիգորին, որ նա թողնէ քրիստոնէութիւնն: Այդժամանակ Տրդատին յայտնեցին, որ Գրիգորը Անակի որդին է: Տրդատ բարկացած հրամայեց, որ նըան տանեն քցեն Արտաշատի ԽորՎիրապը: Այսուեղ Լուսաւորիչը մընաց ամբողջ 15 տարի, շնորհիւ մի բարեպաշտ կնոջ, որ ամեն օր հաց էր քցում Գրիգորի համար և սովամահից ազատում:

Այդ ժամանակները Դիոկղետիանոս կայսեր հալածանքից փախչելով Հայաստան եկան մի խումբ քրիստոնեայ կոյսեր, որոնք ազլում էին Վաղարշապատի հնձաններում: Նորանց մէջ էր Հոփիսիմէ անունով մի կոյս արքայազն, որին կամենում էր կին առնել Դիոկղետիանոս: Կայսեր թղթի վրայ Տրդատ կտաւ այդ կոյսերին և ինքը կամեցաւ կին առնել Հոփիսիմէին:

Սակայն Հոփիսիմէն փախաւ Տրդատի ձեռքից: Արավարյա բարկացած Տրդատը կոտորել տուաւ բոլոր կոյսերին թուով 37 հոգի:

Այս անմեղ կոյսերի արիւնը զուր չանցաւ: Թագաւորի խիզճն սկսեց տանջել նրան այն աստիճան, որ նա

Խելագարուած գաղանի նման սկսեց թագառել սար ու ձոր:

Խոսրովիդուխար մի երազ տեսաւ, ուրնորան միլուսեղէն հրեշտակ ասում էր. թէ միայն Գրիգորը կարող է բուժել Տրդատի հիւանդութիւնը: Ոչ ոք չհաւատաց այդ երազին, որովհետև չէին կարծում թէ Գրիգորը կարող էր կենդանի լինել: Երաղը կրկնուեց. այն ժամանակ Օտա Ամատունին գնաց Արտաշատ և զանելով Գրիգորին կենդանի, հանեց Խոր-Վիրապից և բերեց Վաղարշապատ: Ճանապարհին նրա առաջ գուրս եկաւ հիւանդ թագաւորն իր իշխանների հետ. Գրիգորը ծունկ չոքած աղօթեց նրանց համար և նրանց ցաւերը թեթեացան:

Գրիգորն հաւաքեց նահատակ կոյսերի մարմինները և ամենքին էլ թաղեց իրանց նահատակութեան տեղերում:

Հետեւեալ օրը բարովելով քազաւորին եւ պալատականներին Քրիստոփի հաւատը, նրանց մկրտեց քրիստոնեայ 301 քուին: Այսպիսով, Արդարից յետոյ Տրդար դարձեալ առաջինն էր քոյոր Հերանոս քազաւորների մէջ, որ ընդունեց քրիստոնեութիւն: Դրա համար մեր ազգը առաջին եւ ամենահին քրիստոնեայ ազգն է ամբողջ աշխարհում: Գրիգորն էր, որ լուսաւորեց մեր ազգը քրիստոնէութեամբ, որա համար նա կոչում է Լուսաւորիչ:

Այնուհետեւ Լուսաւորիչ կոյսերի նահատակութեան տեղը եկեղեցիներ շինեց, Հոփիկսիմէի, Գայանէի և Շողակթի անուններով, որ մինչև հիմա էլ կան:

Լուսաւորիչ երազում տեսաւ, որ Փրկիչ ցած եկաւ երկնքից և կոսնով խփեց գեանին. այդտեղ էլ նա հիմնեց հայոց Մայր-Ծաճարը—որ Էջմիածին կոչուեցաւ:

Մաքսիմանոս կայսեր դուր չեկաւ Տրդատի քրի-

նից դառնալը, ուստի պատերազմ ծագեց հայոց և Հռոմէայոց մէջ: Բարեբաղդաբար շուտով կայսը դարձաւ Կոստանդիանոս, որ ընդունեց քրիստոնէութիւն և բարեկամացաւ մեր Տրդատի հետ: Տրդատ Գրիգոր Լուսաւորչի, Արիստակէսի և բազմաթիւ հայ իշխանների ու զօրքի հետ Հռոմ այցելութեան գնաց, հին բարեկամութիւնը կրկնն հաստատելու և մեծամեծ պատիւներով ու հանգէմներով ընդունուեց Հռոմում ինչպէս ինքը, այնպէս և Գրիգոր Լուսաւորիչը:

Պարսից թագաւորը օգտուելով Տրդատի բացակայութիւնից, ուզեց խոռովութիւն առաջացնել Հայաստանում: Նրա գրդմամբ Սլուկ իշխանն ապստամբեց Տրդատից և սպաննելով իր փեսաց Օտա իշխանին, գրաւեց նրա Ողկան ամրոցը Տարօնում: Սկիւթական ազգերն էլ Շապուհից գրգռուած արշաւեցին Հայաստան: Սակայն, շուտով հասաւ Սէզն Տրդատ և Գարգարացոց դաշտում մի սարսափելի ջարդ տուաւ սկիւթացոց բանակին: Բասլաց թագաւոր Գեղքեհոնը, որ կամենում էր թոկով բռնել Տրդատին, մէջքից կէս եղաւ, երբ Տրդատի սուրը նրան երկու կէսարաւ, ձիու գլուխն էլ հետը կտրելով:

Հայաստան դառնալիս, Տրդատ Սլուկ իշխանին էլ ըսպանուած գտաւ Մամգուն ձենացու ձեռքով, որին ընծայեց Տրդատ Սլունի կալուածները Տարօն գաւառում:

Այս Մամգունին Տրդատ նախարարութիւն տուաւ, որից առաջացաւ Մամիկոննեան ցեղը:

Երբ 325 թուին կայացաւ առաջին տիեզերական ժողովը Նիկիայում, Տրդատ և Լուսաւորիչ ուղարկեցին իրանց փոխանակ Արիստակէսին, որ այնտեղից բերեց մեր հաւատի Հանգանակը:

Գրիգոր լուսաւորիչ հայրապետական աթոռը յանձնեց Արքատակեսին, իսկ ինքը մեկուսացաւ Սեպուհ լեռան Մանիայ այրի մէջ. ուր և վախճանեցաւ 332 թ.:

Հովհաները դտան նրա մարմինը և թաղեցին:

Գրիգորից յետոյ Տրդատ թագաւորն ամեն կերպ աշխատում էր քրիստոնէական վարք ու բարք մտցնել Հայաստանում: Վերջը ծերացած ու յոզնած թողեց թագաւորութիւնը և քաշուեցաւ Մանիա այրը ճգնելու: Նախարները ինզրեցին, որ ետ գայ և կրկին շարունակէ թագաւորելը: Տրդատ մերժեց: Ապերախտ նախարարները ծածուկ թունաւորելով զրկեցին նրան կեանքից 342 թ: Տրդատին մէծ հանդիսով թաղեցին Թորդան գիւղում. ուր մի քանի տարուց յետոյ տեղափոխեցին և նրա սիրելի Գրիգոր Լուսաւորչի մարմինը:

### ՏՐԴԱՏԻ ՅԱԶՈՐԴՆԵՐԸ

Հայերի քրիստոնեայ դառնալով կարուեցաւ այն կապը, որ կար հեթանոս Հայաստանի և Պարսկաստանի մէջ: Առանց այն էլ Արշակունիներին թշնամի Սասանեան տոհմը ամեն կերպ աշխատում էր ձեռք բերել Հայաստանը և բնաշինջ անել քրիստոնէութիւնը, որ կապում էր հայերին յոյների հետ: — Տրդատի յաջորդները թոյլ ու մեղկ մարդիկ էին, զբաղուած որսով ու կերուխումով. զբա համար Հայաստանն ասպարէզ դարձաւ անվերջ պատերազմների, մի կողմից Հռոմի ու Պարսից մէջ, միւս կողմից էլ ապօստամբ և անպարտաւան նախարարների, որոնք կամ միմունց դէմ էին պատերազմում թուլացնելով երկրի ներքին ուժերը, և կամ թագաւորի գէմ, միանալով արտաքին Թշնամիների հետ:

Այսպէս Տրդատից յետոյ մինը միւսին յաջորդեցին Խոսրով Բ. որ գահը փոխադրեց Դուիխն և ապա Տերան Բ. (353 թ.) որին գահընկեց անելով Շապուհ, աչքերը կուրացրեց և աքսորեց: Սակայն հայերի սիրով գրաւելու համար նրա որդուն, Արշակ Բ.-ին, կարգեց Հայաստանի թագաւոր (364):

Շատ խախուտ էր այս թագաւորի զրութիւնը, ինչպէս և իր նախորդներինը. հէսց որ պարսից հետ էր բարեկամանում, յունաց կայսրն էր ասպատակում որա երկիրը, հարկ պահանջելով նրանից. կատարում էր յունաց կամքը, պարսից թագաւորն էր վրէժինդիր լինում ահազին պատերազմով: — Այս արտաքին թշնամիների վրայ աւելացան և ներքին խոռվութիւններ: Արշակ իսկդեմ տուաւ իր կոյր հօրը և սպանեց իր եղբօր որդուն, Գնէլին, ու խլեց նրա կինը:

Արշակ մի քաղաք հիմնեց Մասսի ստորոտում և անւանեց Արշակաւան: Որպէսզի քաղաքը շուտով բազմամարդ դառնայ, նա հրաման տուաւ այնտեղ անպատիժ ընդունելու ամեն տեսակ յանցաւորների: Շուտով քաղաքը լցուեց գողերով ու աւազակներով, որոնք նախարարների երկիրներից փախչելով, ապաստանեցին այնտեղ: Նախարարները բողոքեցին. Արշակ անուշագիր թողեց զբանց բողոքը. ուստի ամենքին զայրացրեց ու թշնամացրեց: Նախարարները զիմեցին Շապուհի օգնութեան, որի զօրքերն եկան տիրեցին Անի ամրոցին և կողոպահեցին թագաւորների ուկորները: Հայ իշխանները կործանեցին Արշակաւանը և բնակիչներին կոտորեցին: Հազիւ վրայ հասաւ Ներսէս կաթողիկոսը և ազատեց ծծկեր երեխաներին: Արշակ վերադարձաւ Վրաստանից և պատերազմով գնաց

Նախարարների վրայ, սակայն Ներսիսի միջնորդութեամբ  
նա հաշտուեց առանց պատերազմելու, թէև վերջը գրժե-  
լով իր խոստումը, չարաչար հալածեց ու կոտորեց հակա-  
ռակորդ նախարարներին, բնաջինջ անելով նրանցից մի  
քանիսի ցեղն ամբողջովին:

Շուտով նախարարների դրդմամբ եկաւ պարսից Ա-  
լանոգան իշխանը և գերի տարաւ Արշակին Պարսկաստան:

Երբ Շապուհ պահանջեց թագուհի Փառանձեմի հետ  
բոլոր մնացեալ նախարարների կանանց էլ պարսից Դուռը  
տանել, նախարարները միացած կոտորեցին պարսից զօր-  
քը և հալածեցին: Շապուհ բարկացած բանտարկել տուաւ  
Արշակին Անյուշ բերդը, ուր նա, լսելով իր կողջ գերի  
ընկնին ու մահը, և Հայաստանի ոտնակոս լինելը, ինք-  
նասպան եղաւ 382-ին, Անյուշ բերդում:

Արշակի մահից յետոյ Շապուհ իւր քոյր Որմիզդուխ-  
տին կնութեան տուաւ Մեհրուժան Արծրունի ուրացեալ  
նախարարին, որ նրա ձեռով չնջէ քրիստոնէութիւնը Հա-  
յաստանում, և հայոց թագաւորութիւնը վերջացնելով,  
միացնէ իր Երկրին: — Մեհրուժան բազմաթիւ չարագոր-  
ծութիւններ արաւ Հայաստանում. քրիստոնեայ հոգեորա-  
կաններին հալածեց, և նախարարների կանանց գերի առ-  
նելով, զանազան բերդերում բանտարկեց:

Ներսէս այդ ժամանակ Բիւզանդիա էր. ինզիւց թէո-  
դոս կայսրից, որ Արշակի որդուն, Պապին, թագաւորեցնէ  
Հայաստանի վրայ: Կայսրը յարգեց Ներսիսի ինզիւց և  
յոյն զօրքերով Պապին ուղարկեց Հայաստան, որին միա-  
ցան փախստական հայ նախարարները:

Նպատ լերան մօտ Մեհրուժանը պարսիկ զօրքով դուրս  
եկաւ քրիստոնեայ զօրքի դէմ: Լերան գլխին քրիստոնեա-

Ների աջողութեան համար բազկատարած ազօթում էր Ներ-  
սէս կաթուղիկոսը: Պատերազմը կատաղի էր, բայց վերջի  
վերջոյ յաղթութիւնը մնաց հայոց կողմը: Մեհրուժան փա-  
խաւ, բայց Սմբատ Բագրատունին հասնելով նրա յետեից,  
հովիւներից առաւ տաքացրած շամփուրը, գրեց Մեհ-  
րուժանի գլխին, իբրև թագաւորի և ասաց: «Պապկում եմ  
քեզ, ով Մեհրուժան, որովհետեւ ցանկանում էիր Հայոց  
թագաւոր դառնալ, և ես, իբրև թագագիր ասպետ, կա-  
տարում եմ պաշտօնս»:

Այսպէս խայտառակ եղաւ գաւաճանի մահը. իսկ նրա  
օգնական Վահան Մամիկոննեանին դաւաճանութեան հա-  
մար սպանեց հարազատ զաւակը, Սամուէլ:

Պապի թագաւորութեան ժամանակ Ներսէս բազմա-  
թիւ վանքեր հիմնեց, նոյնպէս հիւանդանոցներ, որքանոց-  
ներ, և այլ բազմատեսակ քրիստոնէական հիմնար-  
կութիւններ: Պապ թագաւորը, որ անառակ կեանք էր  
վարում, ձանձրացած նրա խրառներից, թունաւորեց մեծ  
Հայրապետին: — Յոյներից էլ ձանձրացած, նա կամե-  
ցաւ պարսից կողմն անցնել, բայց յոյն զօրավար Տերին-  
տիանոս, որ զօրքով գտնուում էր Հայաստանում Պապի վրայ  
հսկելու համար, գերի տարաւ նրան Բուզանդիա, ուր  
կայսրը նրան կիսապել տուաւ (388):

Պապին յաջորդեց իր Եղբայր Վարագգատը, ապա իր  
Երկու որդիքը. Արշակ Գ. և Վաղարշակ Բ. (394), նոյն  
տարին մեռաւ Վաղարշակ և թագը մնաց ամբողջովին Ար-  
շակ Գ.-ին:

Այդ ժամանակ յոյներն ու պարսիկները Հայաստանն  
ու Միջազեաքը բաժանեցին միմեանց մէջ: Հայաստանի  
մեծ մասն ընկաւ պարսից ձեռը: Արշակ չըկամենալով հե-

թանոս իշխանի երկրում մնալ, բազմաթիւ նախարարների հետ անցաւ Յունաց բաժինը։ Շապուհն իր մասում թագաւոր կարգեց Խոսրով Գ. Արշակունի իշխանին, որ Սրբակի մահից յետոյ թագաւորեց նաև յունաց բաժին ընկած Հայաստանին։ Այս բանի վրայ կասկածելով Արտաշեր, Խոսրովին կանչեց Տիգրոն և աքսորեց Անյուշ բերդը։

### ՎՐԱՄՇԱՊՈՒՀ ԵՒ ՏԱՐԵՐԻ ԳՐԻՏԸ

Խոսրովին յաջորդեց Նրա եղբայրը, Վռամշապուհ (400-421), որ խելօք ու հեռատես քաղաքականութեամբ կառավարեց Հայաստանը 21 տարի շարունակ, զրաւելով թէ պարսից և թէ յունաց հաւատն ու վստահութիւնը։ Այնպէս որ, երբ Միջագետքում յունաց և պարսից մէջ խռովութիւն ծագեց, Վռամշապուհ երկու կողմերի հրաւերով գնաց Միջագետք և տեղն ու տեղը վէճերը քննեց ու կարգադրեց արդարութեամբ։

Վռամշապուհի թագաւորութեան ժամանակ էր, որ նրա քարտուղարը, Մեսրոպ-Մաշտոց, գտաւ հայոց տառերը 406 թիւն։ Հայերը թէպէս քրիստոնէութիւն էին ընդունել հարիւր տարի առաջ, բայց չունենալով զիր ու զպրութիւն, աւետարանը եկեղեցիներում կարդացւում էր յունարէն կամ ասորերէն և ժամերգութիւնն էլ կատարւում էր այդ լեզուներով։ Ժողովուրդը ոչինչ չէր հասկանում, ուստի մնում էր խաւար և հեթանոս սովորոյթներով։

Մեսրոպը Տարօնի (Մուշ) Հացիկ զիւղիցն էր. մահկութիւնից ուսաւ յունարէն, ասորերէն և պարսկերէն, աշակերտելով Ներսէս Մեծին։ Վերջը նա զիւանապետ էր պալատում, որից ձանձրանալով, հրաժարուեց աշխարհից։

և գնաց Գողթան գաւառը ձգնելու և աւետարանը քարոզելու ժողովրդին։ Այդ քարոզութիւնների ժամանակ նատեսաւ, որ ժողովուրդը չի հասկանում աւետարանի լեզուն, ուստի մտածեց հայերէն տառեր գտնել, որ Ս. վիրքը թարգմանի հայերէն։ Այս նավատակով նա զիմեց Սահակ կաթուղիկոսին և յայտնեց իր խորհուրդը։ Կաթուղիկոսը Վաղարշապատում ժողով գումարեց այդ մասին։ Ներկայ էր և Վռամշապուհ թագաւորը։ Արքան ժողովում յայտնեց, որ Ասորիքում, մի Դանիէլանունով եպիսկոպոսի մօտ հայերէն տառեր է տեսել։

Մարդ ուղարկեցին և բերել տուին այդ տառերը։ Սահակ և Մեսրոպ աշակերտներ հաւաքեցին և փորձեցին այդ տառերը սովորեցնել, բայց տեսան, որ զրանք պակասաւոր էին, և հայերէնի բոլոր հնչիւնները չունէին։

Այնուհետև Մեսրոպ շատերին դիմելուց ձեռնունայն, ապաւինեցաւ աղօթքի և Աստուծոյ օգնութեամբ գտաւ հայերէն տառերը 406-ին։

Այնուհետև Սահակ ու Մեսրոպ անմիջապէս սկսեցին թարգմանել Ս. Գիրքն իրանց աշակերտների օգնութեամբ։ Բազմաթիւ զպրոցներ բացուեցան Հայաստանի զանազան մասերում։

Ընդունակ և խելօք աշակերտներին ուղարկում էին աւելի լուսաւոր քաղաքները ուսում ստանալու, որոնց միջից յետոյ գուրս եկան մեր եկեղեցու նշանաւոր հայրերն, հայ նշանաւոր պտամագիրներն և մատենագիրները։ Այսպէս Սահակի և Մեսրոպի աշակերտներից էին. Ղեռնդ երէցը, Եզնիկ Կողբացին, Կորինը, որ զրեց իր ուսուցչի, Մեսրոպի կեանքը. Մովսէս Խորենացին, որ զրեց հայոց պատ-

մութիւնը, Դաւիթ Անյաղթ փլխտիւն, Եղիշէն, Վարդանանց պատութեան հեղինակը, Ղաղար Փարզեցին, որ գրեց Վարդանանց և Վահանանց պատմութիւնը և այն:

Մեսրոպի, Սահակի և նրանց աշակերաների շնորհիւ հայոց գրականութիւնն ու լեզուն այնպէս ծաղկեց ու զարգացաւ Ե. գարում, որ նա իրօք կոչուեցաւ մեր գրականութեան ոսկէ դարը:

Շատ մեծ է Մեսրոպի նշանակութիւնը, որովհետեւ նրա գտած տառերի շնորհիւ հայերը մտան քաղաքակիրթ ազգերի շաբքը և միանգամ ձեռքբերած քրիստոնէութիւնն ու ազգային լեզուն այնուհետեւ պահպանեցին հաղարաւոր տարիներ շարունակ:

### ՎՐԱՄՇԱՊՈՒՀԻ ՅԱԶՈՐԴՆԵՐԸ

Վառմշապուհի մահից յետոյ պարսիկները փորձեցին վերջ տալ Արշակունի թագաւորութեան, բայց աջողութիւն չունեցան, մինչև որ 4—5 տարի խառնակութիւնից յետոյ, Վոամ, պարսից արքան, Հայաստանի թագը յանձնեց Վոամշապուհի որդուն, Արտաշէսին:

Սա իր անկարգ կեանքով տառելի եղաւ նախարարներին, որոնք միաբանած զիմեցին Սահակ կաթուղիկոսին, կամենալով գահընկեց անել թագաւորին և նրա տեղը պարսիկ իշխան հրաւիրել:

Քառ լիցի, ասում էր ծերունի կաթուղիկոսը, իմ հիւանդու ոչխարր առողջ գազանի նետ փոխել, որի առողջութիւնը մեզ մնասակար է»: Նախարարները չլսեցին Մ. Սահակին, այլ գնալով Վոամի մօտ, գանգատուեցին թէ թագաւորից և թէ կաթուղիկոսից: Վոամ առանց լը-

աելու Արտաշէսին և Սահակին, կանչեց նրանց Պարսկաստան և այնտեղ պահեց, զրկելով մինին թագից, միւսին կաթուղիկոսութիւնից 432-ին:

Սյապիսով վերջացաւ Արշակունի թագաւորութիւնը Հայաստանում, և կաթուղիկոսութիւնը Լուսաւորչիցեղից:

Այնուհետեւ Հայաստանը կառավարում էին պարսից մարզպանները, իրան թագաւորի հրամանների համեմատ:

### Խ ԱՌԱՋԻՆ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՋՄ

Արշակունի հարստութիւնը վերջացնելուց յետոյ, պարսիկների նպատակն էր չնչել քրիստոնէութիւնը Հայաստանում և այդ հարուստ երկիրն ընդմիշտ միացնել Պարսկաստանին: Այդպէս էլ մտածում էր Յազկերա Բ. բայց վախ էր զգում նախ յոյներից, որ իբրև քրիստոնեայ կարող էին օգնել հայերին և երկրորդ, հայ նախարարներից, ուրոնք գեռ զօրեղ ու խրոխտ, կարող էին խանգարել Յազկերա մտագրութեանը: Ուստի նա մտածեց առաջ իր հաշիւը վերջացնել յոյների, ապա հայ նախարարների հետ:

Յարձակուեցաւ Յունաց Միջագետքի վրայ, աւերեց ու կոտրեց, հասաւ մինչև Մծբին և Թէոդոս կայսրին ստիպեց ընդունել իր առաջարկած պայմանները: Այսուհետեւ Հոնաց արշաւանքին մասնակցելու համար հրաւիրուեցան հայ, վրացի և Աղուանից ազգի նախարարներն ու զօրքը, որ մի կողմից երկիրն անպաշտպան մնայ, միւս կողմից թուլանայ:

Եօթը տարի տեսեց Հոնաց պատերազմը, ուր հայ իշխաններն ու զօրքը մեծամեծ քաջութիւններով ապահովեցին Պարսից յաղթութիւնն և աջողութիւնը:

Պատերազմի ժամանակ էլ Պարսից թագաւորն աշխատում էր համոզելու, որ հայիշխանները թողնեն իրանց կրօնը և դպոնան կրակապաշտ։ Այդ անում էր նա առաջ մեղմութեամբ, ապա, մինչև անգամ բռնութեամբ։ Պարսկաստան գնացող զօրքին այլևս ետ չէր թողնում հայրենիք դառնալու և պատերազմի թունդ տեղերն ուղարկելով, աշխատում էր նրանց հետզհետէ կոտորել տալ։

Մինչդեռ զօրքն ու իշխանները հեռու էին հայրենիքից, Հայաստան է գալիս Դենշապուհ իշխանը աշխարհապիր անելու։

Նա հարկի տակ դրեց վանքերն ու եկեղեցիները, որ մինչ այն ազատէին որևէ է առւրքից։ Ժողովրդին էլ ծանր հարկերով ճնշեց ու աղքատացրեց, հոգեւրականներին ըսկուց հալածել և նախարարների մէջ խոռվութիւն ձգել։ Երկրի հազարապետին, որ Վահան Ամատունին էր, պաշտօնից հեռացրեց և նրա տեղը կարգեց մի պարսիկ։ Մի մողականի էլ նշանակեց դատաւոր։

Երբ ժողովուրդը բաւական աղքատացած էր ու թոյլ, Միհրներսէն մի թուղթ ուղարկեց Հայաստան, որ պահարակում էր քրիստոնէութիւնը և գովում Զրադաշտի կրոնը։ Նա պահանջում էր, որ կամ իր զրածին կէտ առ կէտ պատասխաննեն և կամ ընդունեն պարսից կրօնը։

Հայ ազգի իշխաններն ու հոգեւրականներն անմիջապէս հաւաքուեցան Արտաշատ և Յովէփ կաթուղիկոսի նախագահութեամբ ժողով գումարելով, մի շատ խիստ ու համարձակ պատասխան գրեցին պարսից թագաւորին։

Պատասխանը վերջանում էր այսպէս։ «Այս հաւատից մեզ ոչ ոք կարող է շարժել. ոչ մարդիկ, ոչ հուրը և ոչ սուրը։ Մեր բոլոր հարստութիւնը քո ձեռին է, մարմին-»

ներս էլ քո առաջը. արա, ինչ որ կամենաս։ Քեզանից տանջանք և մեղանից համբերութիւն, քո սուրը և մեր պարանոցը»։

Ցագկերտ զարմացած ու բարկացած այս պատասխա-



Վ Ա Ր Դ Ա Ն

նի վրայ, նախարարներին Պարսից Դուռը կանչեց։ Նախարարները, որոնց մէջ էր Վասակ Միհրի և Վարդան Մամիկոննեան, գնացին Պարսկաստան և սովորականին հակառակ խիստ վատ ընդունելութիւն գտան։

Յազկերտ առանց խօսք լուսականում էր, որ ընդունեն պարսից կրօնը և տեսնելով նախարարների հակառակութիւնը, բանտարկել առւաւ նրանց: Նախարարները երկար խորհրդակցելուց յետոյ որոշեցին երեսանց կատարել թագաւորի հրամանը, որպէս զի ազատուելով մի հնար գտնեն նրա չար մտադրութիւնը խորասակելու:

Թագաւորն անչափ ուրախացաւ լուսականում էր ուրանալը: Մեծամեծ պարզեներ ու պատիւներ առւաւ նրանց և 700 մողեր և մողպետներ ու մի զունդ զօրք հետները դնելով, ուղարկեց Հայաստան, որ այնտեղ էլ քրիստոնէութիւնը ջնջելով տարածեն ու քարոզեն պարսից կրօնը (450):

Ապահովութեան համար Յազկերտը պատանդ պահեց Վասակի, որ այդ ժամանակ Հայաստանի մարզպանն էր, երկու որդուցը:

Երբ նախարարների ուրացութեան լուրը Հայաստան հասաւ, ամբողջ երկիրը սուզի մէջ մտաւ:

Հոգեորականները ցրուեցան երկրի զանազան կողմերը ժողովրդին պատրաստելու, որ զէնքով զիմազրեն և իրանց հաւատը կեանքի դնով պաշտպանեն: Որոշեցին ու երգուեցան, որ հայրը որդուն պիտի չխնայէր, եղբայրը եղբօրը, որդին հօրը, կինը ամուսնուն, եթէ ուրացել էր հաւատը:

Նախարարները Հայաստանի սահմանը մտնելով, բանակ դրին Անզգ գիւղում: Կիրակի օրը, պատարագի ժամանակ, մողպետը զօրքերի հետ մտաւ եկեղեցին որ ժամերգութիւնը գաղարեցնէ: Անզգ երէցը, որ պատարագիչ էր, ժողովրդի զլուխն անցած, փայտերով ու բրերով ծեծեց մողերի զլուխը և հալածեց եկեղեցուց:

Յուսահատուած մողպետը կամենում էր թագաւորին գրել այդ մասին: «Եթէ իրանք աստուածներն էլ օգնութեան գան, անկարելի է մեր օրէնքը հաստատել Հայաստանում», ասում էր նա, բայց գաւաճան Վասակը համոզեց նրան մի քիչ էլ համբերել, մինչև որ խաբելով ու խարդախելով սրան կամ նրան գրաւէ իրանց կողմը:

Այդ ժամանակ ուրացեալ նախարարները Շահապիվանում ժողով գումարեցին և ամենը երգուելով աւետարանի վրայ հաստատեցին, որ կեղծ էին ուրացել, իրանց մատանիներով կնքեցին աւետարանը, ինչան իրանց հաւատարմութեան քրիստոնեայ եկեղեցուն: Վասակն էլ միաբանեցաւ և իր մատանիով կնքեց աւետարանը: Դրանից յետոյ հայերը կոտորեցին մողերին և պարսից գրաւած բերդերն առնելով, կրակատունները քարուքանդ արին:

Այդ ժամանակ գումարիան եկաւ Աղուանից աշխարհից, խնդրելով օգնութեան համեն նրանց, որովհետեւ պարսից զօրքը երկիրը մտնելով մողերի հետ, աշխատում էր ջնջել քրիստոնէութիւնը:

Վարդան սպարապետը հայոց զօրքը երեք մասի բաժնեց, առաջինը տալով Ներշապուհ Արծրունուն, ուղարկեց Ատրպատական, Պարսից սահմանը. Երկրորդ զունդն առնելով Վարդան, գնաց Աղուանից աշխարհին օգնութեան, իսկ երրորդ զունդն առաւ ինքը Վասակ, որպէս թէ Հայաստանի կենդրոնը պաշտպանելու, այն ինչ նա մարդ ուղարկեց պարսիկներին իմաց տալու, թէ տեսէք, ահա հայոց ոյժը թուլացրի, մասմաս բաժանելով նրանց:

Վարդանը Աղուանից երկրում, Կուրի ափին, սոսկալի ջարդ տալով, հալածեց պարսիկներին ետ առնելով նրանց տիրած բերդերն ու աւերած հարստութիւնը, կոտո-

բելով մոգերին և կողծանելով կրակարանները, հասաւ մինչև ձորայ դուռը և դաշն կապեց հոնաց հետ (450):

Սակայն, գուժկան հասաւ վարդանին Հայաստանից, որ պատմեց Վասակի չարագործութիւնները, թէ ինչպէս նա շատ քաղաքներ ու գիւղեր այրեց, շատ եկեղեցիներ կործանեց և ուխտապահ նախարարների որդոց գերելով, Սիւնեաց բերդերում փակեց:

Վարդանն աճապարեց Հայաստան, ձմեռը վրայ հասաւ և երկու կողմից էլ մարդիկ զբաղուեցան իրանց կուսակիցները շատացնելով: Գարունը բացուելուն պէս Մուշկան Նիւսալաւուրտ զօրավարը ահազին զօրքով բանակ դրեց Հեր և Զարեանդ գաւառներում: Վարդանն էլ հաւաքեց իր զօրքերը թուռվ 66,000 հոգի և դուրս եկաւ թշնամու դէմ, Արտազ գաւառի Աւարայր դաշտում, Տղմուտ գետի ափին: Բանակումն էին Յովսէփ Կաթողիկոսն ու Ղեռնդ երեցը, որ մի ոգևորուած ճառով խրախուսեց զօրքին: Հետեւ առաւօտ վաղ, պատարագից յետոյ, սկսուեց պատերազմը նետերով: Պարսից զօրքը երեք անգամ աւելի էր հայերից և բազմաթիւ պատերազմական փղերով շրջապատւած:

Չնայելով դրան, նրանք վախեցան գետն անցնել, հայերն էին, որ անվախ զետն անցնելով, յարձակուեցան պարսից աջ թեմի վրայ, Վարդանի առաջնորդութեամբ, և շփոթութիւն քցեցին նրանց զօրքի մէջ: Սակայն, հայոց զօրքի մի մասն այդ ժամանակ թուլանալով, տեղի տուաւ և պարսիկները սիրտ առան: Պատերազմը տեսց մի ամբողջ օր. Պարսից զօրավարը օգտուելով հայոց քչութիւնից, պահեաւի փղերը մօտ բերեց և շրջապատեց Վարդանին: Վարդանը ընկաւ նահատակի մահով, շատ թանկ ծախելուց յե-

տոյ իր կեամքը պարսիկներին (451). Նրա հետ ընկան բազմաթիւ այլ քաջեր հայոց բանակից, զինուորների հետ միասին 1036 հոգի, իսկ պարսից կողմից 3544 հոգի և ինսը գօրավար:

Վարդանանց պատերազմի յիշատակը մենք տօնում ենք բարեկենդանի վերջին հինգշաբթի օրը:

Հայերն քաշուելով իրանդ լեռները և ամուր տեղերը, փոքրիկ յարձակումներով մեծամեծ վնասներ էին տալիս Պարսիկներին: Յազկերուը տեմնելով իր զօրքի կրած ահազին վնասները, զղջաց: Վասակին կանչեց Պարսկաստան և նրա տեղ պարափ մարզպան նշանակեց: Հրաման տուաւ, որ եկեղեցիները նորից բացուին և կրօնի ազատութիւն յայտաբարեց:

Միայն Յովսէփ կաթողիկոսին և Ղեռնդ երեցին մի քանի այլ ապատամբ նախարարների հետ Պարսից Դուռը կանչեց, շղթայակապ:

### ՎԱՍՍԿԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

Մի հանդիսաւոր օր թագաւորը պալատ կանչեց Վասկին: Նա հագաւ իր թանկագին շորերը, գլխին ոսկեղէն խոյր ունէր, մէջքին մարդարդազարդ գօտի, ականջին ոսկէ օղեր, և ուսին արքայական սամոյր: Միայն թագն էր պակաս և նա կարծում էր, որ թագաւորը նրան կտայ Հայաստանի թազը:

Պալատումն էին և շղթայակապ հայ քահանաներն ու նախարարները, որոնք բաց արին Վասակի խարդախութիւններն ու գաւաճանութիւնը, որ մի կողմից հայերին էր խարում, միւս կողմից պարսիկներին: Վասակի ազգա-

կաններն անզամ պարսիկ մողերի հետ հաստատեցին, որ  
երկրի աւերման և պատերազմի պատճառը վասակին էր:

Թագաւորն հրամայեց զրկել Վասակին բոլոր ունեցա-  
ծից և բանտարկել նրան: Իսկոյն հանեցին նրա բոլոր զար-  
դերն ու զգեստները և մահապարտի հագուստ հաղթնելով,  
նրա ձեռք ու ոտքը կապած նստեցրին մատակ ձի և բանտ-  
արան: Այնտեղ նա երկար տանջուելուց և ծանր հիւան-  
դանալուց յետոյ մեռաւ խորին աղքատութեան մէջ: Գե-  
րեզմանի տեղ չգտաւ իր հայրենիքում այն մարդը, որ  
Հայաստանի թագաւոր էր ուզում դառնալ դաւաճանու-  
թեամբ:

Շղթայակաս քահանաներն էլ նահատակուեցան մի  
քանի տարի բանտարկելուց յետոյ, իսկ նախարարները 12  
տարի բանտ և նեղութիւն կրելուց յետոյ, կրկին ազատու-  
ցան և վերադարձան Հայաստան:

### ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Վարդանանց պատերազմից յետոյ Պարսիկները թէպէտ  
բոնութեան չէին զիմում, բայց ուրիշ ամեն միջոցներով  
դաւաճաններին և հաւատութացներին առաջ էին քաշում  
իսկ ազնիւ ու կարգին հայ իշխաններին հալածում: Դժգո-  
նութիւնը շատ մեծ էր հայոց մէջ և այս անզամ էլ զըժ-  
գոնների և ապստամբների զիուխ կանգնեց Մամիկոնեան  
տոհմի աւագը, Վահանը, որ Վարդանի եղբօր որդին էր:  
Սա չորս տարի շարունակ Հայաստանի գանազան մասե-  
րում շարունակ կուռի էր բոնում Պարսիկների հետ, քա-  
ջութեամբ պատերազմում էր և նրանց կոտրում ու հա-  
լածում: Շատ հեռատես ու խելօք էր Վահանը, ինչպէս և  
քաջ ու մեծահոգի:

Պարսիկները տեսան, որ պատերազմով չեն կարող  
վահանին ընկճել, համաձայնեցան նրա առաջարկած պայ-  
մաններն ընդունել և հաշտութիւն կայացնել: Այդ պայ-  
մանով քրիստոնէութիւնը ճանաչուեց որպէս հայոց կը-  
րօն, որին ոչ ոք իրաւունք չունէր այնուհետև ձեռք տա-  
լու: Դաւաճանները պատուի պիտի չարժանանային և ազ-  
նիւ ու հաւատարիմ մարդիկ պիտի չհալածուէին:

Պարսիկները տեսնելով Վահանի ազնւութիւնն ու  
խոհեմութիւնը, նրան յանձնեցին թէ երկրի կառավարու-  
թիւնը—մարզպանութիւնը և թէ սպարապետութիւնը: Յով-  
հան կաթուղիկոսն ուրախացած մեծ հանդէս կատարեց այդ  
առթիւ էջմիածնում և մի գեղեցիկ ճառ ասաց (485) թ.:

Վարդանանց և Վահանանց պատերազմներից յետոյ  
Հայաստանի արևելեան մասը դարձեալ մնաց Պարսից իշ-  
խանութեան հապատակ մինչև Սասանեանց անկումը և ա-  
րաբաց արշաւանքները: Պարսիկները երբ իրանց զօրաւոր  
էին զգում, իսկոյն մոռանում էին իրանց խոստումը, նշա-  
նակում էին պարսիկ մարզպաններ և նեղելով ու ճնշելով  
հայերին, կամենում էին հայերին իրանց կրօնին դարձնել:

Հայերն էլ շարունակ ապատամբում ու կոտորում  
էին Պարսից զօրքը կամ յունաց օգնութեամբ և կամ մե-  
նակ, հաւատարիմ մնալով իրանց կրօնին: Այս պատերազմ-  
ների մէջ մեծ անուն հանեց և նշանաւոր դեր խաղաց  
Վահանը, Մամիկոնեան տոհմից, որիր անօրինակքաջութեան  
համար Գայլ էր կոչում: Երբ Միհրան պարսից զօրավարը  
30,000 զօրքով յարձակուեց Տարօնի վրայ, Գայլ Վահանը  
խորամանկութեամբ գնաց և բարեկամ ձևացաւ Միհրանին,  
այն ինչ գաղտնի առանձին գնդերով 4000 հոգի պարսիկ  
մէկ ջարդել տուաւ, 2000 մէկ, 1000 մէկ, մի 1000 էլ

մէկ. Այսպէս Պարսից զօրութիւնը խորտակելուց յետոյ Միհրանին էլ սպանեց 604 թ. և Տարօնն ազատեց թշնամու ձեռքից:

Պարսից թագաւորը նորէն զօրք ուղարկեց Տարօնը պաշարելու։ Գայլ Վահանը լուռ նստած խորամանկու-



Գ.Ա.Յ. Վ.Ա.Հ.Ա.Ն

թեամբ սպասում էր թշնամու դալուն, որոնցից 4000 հոգի մէկ ջարդեց, 5000 մէկ։ Այդ ժամանակ ծերութիւնից մեռաւ Վահանը և պարսից զօրավարը վստահացած, 10,000 զօրքով յարձակուեց նրա որդու, Սմբատի վրայ։ Սըմբատ չարաչար կոտորեց պարսից զօրքը, սպանեց նրանց

զօրավար Վախտանգին և նրա կնոջն ու որդոցը գերի տարաւ։ 20 տարի յետոյ պարսիկները նորէն արշաւեցին Տարօն, բայց նորէն սարսափելի ջարդ կրելով տեղի տուին։

### ԱՐԱԲԱՅ ԱՐՃԱԿԱՆՔՆԵՐԸ ԵՒ ԲԱԳՐԱՏՈՒԻՆԻՔ (640—1080)

Սասանեան թագաւորութիւնը կործանեցին արաբները, աիրեցին Պարսկաստանին, տարածեցին այնտեղ Մահմեդի կրօնը և այնուհետև աշխատեցան տիրել Հայաստանին և տարածել հայոց մէջ մահմեդականութիւն։ Ամբողջ յիսուն տարի կոռւելով յունաց հետ, արաբները Հայաստանը արեան, աւերածի և կրակի ասպարէզ դարձրին, մինչև բոլորովին տիրեցին Եօթերորդ դարու վերջերին։ Առաջին անգամ Հայաստան եկաւ արաբ Արդրահման 18000 զօրքով, 640-ին և մտաւ Տարօն։ Գայլ-Վահանի թոռնորդին, Տիեան, գուրս եկաւ նրա դէմ 8000 զօրքով։ Մացեալ հայ իշխանները չուզեցան օգնել նրան և Սահուռ Անձևացին էլ պատերազմի ժամանակ դաւաճանեց նրան անցնելով արաբաց կողմը։ Տիրան զո՞ն զնաց և արաբացիք հասան մինչև Դուխին, տանելով 35,000 գերի։ Այսուհետև Արաբացիք մի քանի անգամ յարձակումներ ունեցան Հայաստանի վրայ փոխ առ փոխ։ Երբ արաբացիք հեռանում էին, գոլիս էին կրօնամոլ և հայատեաց յոյները. սրանց դէմ էլ եսկոյն կոռւելու էին գուրս զալիս արաբները. և Հայաստանը կոռւախնձոր դառած այս երկու երկիրների մէջ, արկւնքամ էր լինում։

Արաբացիք Հայաստանը կառավարում էին ոստիկանների կամ ամիրաների ձեռքով, որոնք ծանր հարկերով կերպում էին երկիրը։ Նրանք իշխաններին և մեծամեծ-

ներին կամ գերի էին տանում և կամ պատանդ էին վերցնում, իսկ ժողովրդին էլ ծանը հարկի տակ էին պահում, որ չկարողանան ապստամբել: Չնայելով այդ ձնշումներին, Հայերը մի քանի անգամ ապստամբեցան և կոտորելով ոչնչացրին արար զօրքը:

Այսպէս Սմբատ Բիւրատեան Բագրատունին գերութիւնից փախչելով, յոյներից օգնութիւն ստացաւ և Վարդանակերտի մօտ այնպիսի ջարդ տուաւ արաբաց, որ Աբգլահ ոստիկանն հազիւ իր զլուխն աղատեց:

Հայերից վրէժ առնելու եկաւ Մոհմատ զօրավարը և անարգել հասաւ մինչև Վանանդ: Այստեղ Սմբատ Բագրատունին և Ներսէս և Կամսարականը մի սարսափելի ջարդ տուին նրան և փախցրին:

Մոհմատ աւելի մեծ զօրք հաւաքելով, կրկին եկաւ Հայոց վրայ, բայց նրա գէմ դուրս եկաւ ծերունի Սահակ կաթուղիկոսո, որ նրա բարկութիւնը մեղմէ: Ճանապարհին կաթուղիկոսը մեռաւ, բայց մեռնելուց առաջ մի թուղթ զրեց Մոհմատին, խնդրելով չկոտորել իր հօտին:

Աւանդութիւնը պատմում է, որ երբ Մոհմատը մօտենում է կաթուղիկոսի գագաղին, հանգուցեալի ձեռքը բարձրանում է և թուղթը տալիս է ոստիկանին: Այս թուղթը կարգալով, Մոհմատը ոչ մի վաս չհասցրեց հայերին:

Մոհմատից յետոյ Հայաստան եկաւ կաշմ ոստիկանը. (704 թ.) որպէսզի նոր ապստամբութեան առաջն առնէ, այս արիւնարբու գագանը հայ իշխաններին հրաւիրեց նախիջնամի եկեղեցին և բոլորին միասին այրեց, իսկ նրանց երկիրները սրի և աւարի մատնեց:

Այդ ոստիկաններից բարի անուն թողեց Հայաստանում միայն Մրուան: Սա շատ սիրեց Աշոտ Բագրատունուն և երբ

Արաբիայում խոռվութիւն ծագեց, Մրուան Հայաստանի ոստիկանութիւնն յանձնեց Աշոտին և անուանեց նրան իշխանաց-իշխան: Այսունետեւ հայերը նորից ապստամբեցան ու կոտորեցին և նորից նուաճեցան ու կոտորուեցին արաբներից, զրեթէ մի դար շարունակ, մինչև որ Մեծ Հայաստանին թագաւոր դարձան Բագրատունիք:

### ԲԱԳՐԱՏՈՒՆԻՔ, ԱՇՈՏ Ա. ԹԱԳԱԼԻՌ

Աշոտ Բագրատունին իր բարի և ազնիւ, խելօք ու շինարար բնաւորութեամբ զբաւել էր թէ հայ իշխանների և թէ արտք ոստիկանի սիրար: Բուղայ ոստիկանի աւերածութիւններից յետոյ անտէր ու աւերակ Հայաստանը շունչ և հոգի առաւ Աշոտի շնորհիւ, որ իր ահապին հարստութիւնը շինայեց երկիրը վերաշնելու և թշուառ ժողովրդին օգնելու: Նրա խնդիրքով գերի նախարարներն աղատուեցան բանտից և վերադարձան Հայաստան:

Այդ ժամանակ Զահար պարսիկը 80,000 զօրքով մըտաւ Հայաստան. Աշոտը նրա գէմ ուղարկեց իր Արաս եղբօրը, որ Արաքսի ափին չարաչար կոտորեց պարսիկներին:

Այս յաղթութեան և խելօք ու բարի բնաւորութեան շնորհիւ Աշոտ ընդհանուրին սիրելի էր եղել այն աստիճան, որ հայ իշխանները խնդրեցին ամիրապետից, որ Աշոտին կարգէ հայոց թագաւոր: Ամերապետը յարգեց հայոց խնդիրը և թագ ու ծիրանի ուղարկեց Աշոտին: Գէորգ կաթուղիկոսը մեծ հանդիսով օծեց նրան թագաւոր Անիքանքում 885 թ.:

Նոյն տարին յունաց Վասիլ թագաւորն էլ, որ Արշակունի էր, թագ և բազմաթիւ ընծաններ ուղարկելով, շնորհաւորեց Աշոտի թագաւոր դառնալը:

Աշուա նորոգեց Արշակունի թագաւորութեան կարգերն ու պաշտօնները:—Արքասի և իր որդի Սմբատի ձեռովնուածեց ապստամբ Վանանդն ու Գուգարքը և շրջակայ իշխանների հետ խաղաղութեան դաշն կապեց:

Աշուա մեռաւ Շիրակում, երբ վերադառնում էր Պօլսից, Լևոն կայսեր այցելութիւնից յետոյ:

**ՍՄԲԱՏ Ա. (892)**

Աշուատին յաջորդեց իր որդին, Սմբատ Ա. որ մեծ սուդ կատարեց հօր մահուան վրայ: Հազիւ նա թագաւոր էր դարձել, որ ապստամբեցաւ Արքաս սպարապետը, բայց յաղթուելով, անձնատուր եղաւ: Սմբատ նորոգեց իր հօր կապած դաշնքը Լևոն կայսեր հետ: Պաշարեց Դուխն քաղաքը և գերի առաւ նրա մահմեդական իշխանին: Այս ամենը չէր կարող դուր գալ Աֆշին ոստիկանին, որ Ասլը պատականից ահազին զօրքով մտաւ Հայաստան և բանակեց Դուխնի առաջ: Սմբատ թէպէտ անպատճառ, Դողս գիւղի մօտ գուրս եկաւ ոստիկանի դէմ և յաղթելով քշեց նրան Հայաստանի սահմաններից:

Աֆշին ոստիկանն այնուհետև մտածեց նենդութեամբ վնասել Սմբատին: Նրա զրդմամբ Սմբատի դէմ ապստամբեց Աշուա Արծրունի իշխանը, բայց բռնուեց և բանարկուեց Փագիկ իշխանի ձեռովի: Նոյն այդ Փագիկը դաւաճանութեամբ անցաւ թշնամու կողմը և մեծ վնաս հացրեց Սմբատին, երբ սա պատերազմում էր Միջապետքի Ահմատ ոստիկանի հետ, Տարօնում:—Աֆշին նորէն միքանի անգամ եկաւ Սմբատի վրայ: Բայց չկարողանալով ոչ նրան բռնել, ոչ էլ մեծ աջողութիւն ունենալ, պատանդներ առնելով հետացաւ: Բագրատունիք հարկն ուղարկում էին Բաղդատ Ատրապականի ոստիկանների ձեռովի:

Աֆշինին յաջորդեց նրա եղբայր Իւսուփը, Սմբատին աջողուեց ազատուել նրա Գերիշխանութիւնից և հարկն անմիջապէս ուղարկել Բաղդատ: Սակայն, շուտով Իւսուփը կըկին ձեռք բերաւ իր իրաւունքները և Սմբատից սաստիկ հարկեր պահանջեց:

Նախարարները նեղացած այդ հարկերից, ապստամբեցան, բայց Սմբատ յաղթելով խեղդեց այդ ապստամբութիւնը:

Այդ ժամանակներն էր, որ Փագիկ Արծրունին թագստանալով Ատրապատականի ոստիկանից, թագաւորեց Վասպարականում, միացաւ ոստիկանի հետ, եկաւ դաւաճանութեամբ տակն ու վրայ արաւ Հայաստանը: Սմբատի զօրքը ջարդուեց և նրա Մուշեղ որդին գերի ընկաւ: Անպաշտական մնացած ժողովուրդը մասամբ կոտորուեց, մասամբ ապաստանեց լեռները: Սմբատ մի խումբ քաջերի հետ ապաւինեց կապոյտ բերդը: Նրա քաջ զօրականները մի բանի անգամ ետ մղեցին ոստիկանի բանակը: Բայց Սմբատ երկար պաշարումից և սովից նեղացած անձնատուր եղաւ այն պայմանով, որ իր հետ բռնոր պաշարուածների կեանքին ձեռ չտան (913). Իւսուփ խոստացաւ, բայց մի ամբողջ տարի բանտարկելուց յետոյ, սպանել տուաւ Սմբատին:

**ԱՇՈՒԱ ԵՐԿԱԹ (915—928)**

Սմբատի անձնատուր լինելով գբեթէ ամբողջ Հայաստանն ընկաւ Իւսուփի ձեռը: Սմբատի որդին, Աշուաը, հօր մահուան վրէժն առնելու համար իր սակաւաթիւ զօրքերով յարձակուեց Իւսուփի զօրքերի վրայ և ամեն տեղ յաղթելով, հետզհետէ ետ զբաւեց իր հօր կալուածները: Նախարարները, տեսնելով նրա աջողութիւնները, դուրս եկան իրանց բերդերից և Աշուաին թագաւոր նստացրէն (915):

Իւսուֆ նորանոր գօրքերով և ասպատակներով սկսեց աւելի Աշոտի երկիրները։ Նախարարները փոխադարձ կոփէներով ու դաւաճանութեամբ զբաղուած, չէին միանում թագաւորի հետ, որ ընդհանուր թշնամուն դուրս քշեն երկրից։ Երկիրը շարունակ պատերազմների և աւերածութիւնների պատճառով մնաց անմշակ, որին հետեւց մի սարսափելի սով. այն սատիճան, որ ծնողները մի պատառ հացի համար ծախում էին իրանց զաւակներին։

Յունաց կայսրը վերջապէս յիշեց իր քրիստոնէական պարտքը և Աշոտին թիւզանդիա հրաւիրելով, նրան մի գունդ օգնական գօրք տուաւ։

Իւսուֆը, Աշոտի տան մէջ երկպառակառում քցելու համար, նրա հօրեղքօր որդուն, Աշոտ անունով, թագ տըւաւ և Հայաստանի թագաւոր կարգեց։ Պատերազմն անխուսափելի էր և երկու ազգական Աշոտներն անվերջ կոփէներով արիւնքամ եղան, մինչև որ Յովհաննէս կաթողիկոսի երեք-չորս միջնորդութիւնից յետոյ հաշտութիւն կայցաւ Դուբնում մեծ հանդէմներով։

Գուգարաց Վասակ, Ռւտէացոց Մովսէս և այլ մեծ ու փոքր իշխաններ, փորձեր արին ապստամբելու և ինքնագրութիւններու։ Շատ ջանաց մանաւանդ թագաւորի եղբայր Արասը, որ կամենում էր հարազատ եղբօրն սպանել, բայց բոլոր այս փորձերն և ապստամբութիւնները Աշոտ խեղում էր հէնց քնում, արժանաւոր պատիժը տարով դաւաճաններին։ Այս անվերջ պատերազմների և անասելի արիութեան համար Աշոտ կոչուեցաւ Երկար։

Աշոտ իր թագաւորութեան վերջին տարիները կրկին պատերազմի բռնուեց Բէշիր ոստիկանի հետ, որի գօրքը

Աշոտի և Գէորգ Մարզպետունու առաջնորդութեամբ հայածուեց Հայաստանից։ Աշոտ մեռաւ 928 թ.։

ԱԲԱՍ. ԱՇՈՏ Գ. ՌԴՈՐՄԱԾ, ՍՄԲԱՏ Բ. ԳԱԳԻԿ Ա.

Աշոտ մեռաւ անժառանգ. նրան յաջորդեց իր եղբայր Արասը (928—951) սա աշխատեց խաղաղութեամբ կառավարել երկիրը. հաշտութիւն կապեց Դուբնի և Ատլը պատականի ոստիկանների հետ, գերի հայերին ազատեց արաբների ձեռից և բազմաթիւ աւեր գիւղ ու քաղաքներ նորոգեց։ Երկիրն սկսաւ հանգստանալ և արհեստներն ու երկրագործութիւնն աճել ու զարգանալ։

Արասի աթոռանիստը կարս քաղաքն էր, ուր նա մի հոյակապ եկեղեցի հիմնեց (որ այժմ ուստաց ձեռին մայր եկեղեցի է)։ Արխագների Բեր թագաւորը ծաղրով իմացտուաւ Արասին, որ գալիս է նրա շինած եկեղեցին յոյն ծէսով օծել տալու։ Արաս Գէորգ Մարզպետունու հետ, կուրի ամին, ջարգեց Բեր թագաւորի գօրքը և գերի վերցեց նրան։ Արաս իր շինած եկեղեցին ցոյց տալուց յետոյ, հրամայեց կուրացնել Բեր թագաւորին։

Արասին յաջորդեց իր որդին, Աշոտ Գ. (952—977). Նա Շիրակը թշնամիներից մաքրելուց յետոյ թագաւոր օծուեց Անի քաղաքում, որ այնուհետեւ դարձաւ Բագրատունեաց մայրաքաղաքը։

Աշոտի եղբայր Մուշեղը փառասիրութիւնից դրդուած իրան թագաւոր հրատարակեց Կարսի (968)։ Հեռատես Աշոտը դժոխութեան ոչ մի նշան ցոյց չտուաւ այս առթիւ, որով ազգամիջեան կոռու առաջն առաւ։

Աշոտ մեծ ուշագրութիւն դարձեց Երկրի ամրութեան վրայ, բերդեր շինեց և գօրքի թիւը հասցըց 20,000

հոգու: Այս զօրքով նա գնաց Համտուն զօրապետի վրայ, որ ամիրապետից ապստամբելով, սպառնում էր Հայաստանի հարաւային սահմաններին: Աշոտ յաղթեց նրան և գերի առնելով, դիմատել տուաւ:

Ցունաց Զմշկիկ կայսրը արարաց դէմ գնալիս բանակեց Տարօն և սպառնում էր Հայաստանին: Աշոտ միացեալ հայ զօրքերով, դուրս եկաւ նրա դէմ: Կայսրը տեսնելով նրա ահազին զօրքը, օգնութիւն խնդրեց Աշոտից և սուս ու փուս հեռացաւ Հայաստանից:

Այս արտաքին յաղթութիւններից աւելի, Աշոտ յայտնի դարձաւ իր ներքին բարեգործութիւններով, հիմնեց շատ եկեղեցիներ ու վանքեր, բաց արաւ բազմաթիւ հիւանդանոցներ և անկելանոցներ, որոնց ապահովեց հարուստ հասոյթներով: Նա առանց աղքատների և տնանկների սեղան չէր նստում, ուստի կոչուեցաւ Աշոտ Ողորմած, և անխնախիր սիրելի էր ամենին:

Աշոտ Ողորմածին յաջորդեց իր որդին՝ Սմբատ Բ. որ իր 13 տարուայ թագաւորութեան ընթացքում մի անդամ միայն պատերազմեց իր հօրեղօր, Մուշեղ թագաւորի հետ: Մնացեալ ժամանակ նա խաղաղութեամբ շարունակում էր հօր շինարար գործերը, մանաւանդ զարդարելով ու մեծացնելով Անին:

Սմբատին յաջորդեց իր եղբայր, Գագիկ Ա.: Բագրատուննեաց տունը սրա ժամանակ հասաւ իր փառքի գագաթնակէտին: Խոհեմ ու հմուտ, Գագիկի ջանքն եղաւ հեռու մնալ պատերազմներից և նուիրուել երկրի բարեկաւութեանը: Նա իշխեց 30 տարի առանց պատերազմի, մի բան որ կարելի է առել չի տեսնուած մեր պատմութեան մէջ և այդ երեսուն տարիների ընթացքում հայ ազգն հան-

գիստ վայելելով, նուիրուեց շինարարութեան, և արուեստների:

Առետուրը զարգացաւ, երկրագործութիւնն աճեց, քաղաքները մեծացան և հարստացան, գիւղերն ու աւանները շինացան: Գագիկ հետեւելով իր պապերին, բազմացրեց դպրոցներն ու բարեգործական հիմնարկութիւնները:

Նա մեռաւ 1020-ին:


### Ա Ն Ի

Մի ժողովրդական առած կայ թէ՝ «գիւնյա եխըլսա, Անի եափար, Անի եխըլսա, գիւնյա եափմագ». այսինքն, աշախարհն աւերուի՝ Անին կը շինի, — Անին աւերուի, աշխարհը չի շինի»: Անքան մեծ ու նշանաւոր է եղել մի ժամանակ Անին, որ կործանումից 500 տարի յետոյ, ժողովուրդը չի մոռացել նրա փառահեղութիւնը, որ հէնց այսօր իր շինութիւնների նրբութեամբ և արուեստի գեղեցկութեամբ զարմանք է պատճառում Եւրոպացի ճամբորդներին:

Անին իր փառքի գագաթնակէտին հասաւ Սմբատ Բ.-ի և Գագիկի թագաւորութեան ժամանակ, որոնք օգտուելով երկրի խաղաղութիւնից, ամեն ջանք գործ գրին շինացնելու և զարգարելու իրանց մայլաքաղաքը: Մինչև այսօր կանգուն են Անի-ի երկու կարգ գեղեցիկ և ամուր պարիսպները, և ներքին շինութիւններից Մայր-տաճարը: Ինչպէս Անիի մեծ մասը, այնպէս էլ այս տաճարի շինութիւնն սկսաւ Սմբատ և վերջացրեց Կատրամիտէ թագուհին, Գագիկի կինը: Ամենանշանաւոր շինքերը Անիում Տրդատ ճարտարապետի գործերն են:

Խիստ շատ էին Անի-ի մէջ եկեղեցիները. այնքան շատ, որ ժողովուրդը նրանց թիւը կարծում էր հազար և մէկը:

Անին Բագրատունիք երբ գնեցին կամսարականներից,  
մի փոքրիկ բերդ էր միայն։ Նա մայրաքաղաք Պարձաւ



Անիի ՄԱՅՐ ՏԱՅԱՐԸ

Աշու ողորմածի օրով 952-ին, իսկ Գաղիկի մահուան տարին, 1020 թուին, արդէն պատրաստ էին նրա բոլոր գըլ-խաւոր շէնքերը.

### ՅՈՎՀԱՆՆԵՍ-ՍՄԲԱՏ ԵՒ ԱՇԽԱՏ

Գաղիկ Ա-ին յաջորդեց նրա աւագ որդին, Յովհաննէս Սմբատ, որ մի թուլասիրտ և դանդաղուտ մարդ էր։ Նրա Աշու եղբայրն, ընդհակառակը, քաջ էր և ռազմասէր։ Նա զօրք հաւաքեց, օգնութիւն ստացաւ Վասպուրականի թագաւորից և յարձակուեց իր եղբօր վրայ։ Թագաւորի

դօրքը պարտութիւն կրեց։ Պետրոս կաթողիկոսի և նախարարների միջնորդութեամբ երկու եղբայրներն հաշտուեցան։ Պարսից և վրաց սահմանները յանձնուեցան Աշոտին, իսկ Անին իր շրջակայքով մնաց թագաւորի իշխանութեան տակ այն պայմանով, որ նրա մահից յետոյ թագաւոր պիտի դառնար Աշոտը։ Սրանից էլ անբաւական, Աշոտ մի քանի անգամ թակարգներ լարեց եղբօր գէմնորանից թագը խլելու համար, բայց անաջող։

Այդ ժամանակն էր որ սկսուեցին Սելջուկեան թուրքերի յարձակումները Հայաստան, Տուղրիլ Բէզի առաջնորդութեամբ։ Վասպուրականի Սենեքերիմ թագաւորը չարաշար յաղթուելուց յետոյ անկարող էր երկրորդ անգամ դուրս գալ Տուղրիլ-Բէզի գէմ, ուստի իր բոլոր երկիրները յունաց թագաւորին տալով, փոխարէնն ստացաւ Սելջուկիա քաղաքը և տնով տեղով հաստատուեց այնուեղ (1021)։

Յունաց Վասիլ կայսրը Վրաստանը նուաճելուց յետոյ 1023 թ. մօտենում էր Հայաստանի սահմաններին։ Վախկոտ և թուլամորթ Յովհաննէս-Սմբատը, որ ծածուկ օգնել էր վրաց թագաւորին, վախեցաւ յոյներից և Պետրոս Գետագարձ կաթողիկոսի ձեռքով երգման թուղթ ուղարկեց, որ յանձն է առնում իր մահից յետոյ Անին կայսեր թողնել։

Վասիլին շուտով յաջորդեց Կոստանդին։ Սա լինելով բարդ, մահից առաջ յանձնում է Յովհաննէս-Սմբատի նամակը հայ Կիրակոս քահանային ասելով. «Ճար տուր այս նամակը քո թագաւորին և ասա, որ չեմ ուզում ուրիշն սեփականութիւնը յափշտակել»։

Դաւաճան քահանան չկատարեց կայսեր կամքը, այլ նամակը մօտը պահելով, թանկ գնով ծախեց նրա յաջորդ Միքայէլ կայսեր (1034-ին)։

գ Ա գ ի կ թ.

Շուտով մեռան Յովհաննէս-Սմբատ և իր եղբայրն Աշոտ: Փառանդ մնաց Աշոտի փոքրահասակ որդին, Գագիկ: Երկիրը մնաց անոտէր և դարձաւ նախարարների ու արտաքին թշնամիների կոռուի ասպարէզ: Շուտով հասան և կայսեր գեսպանները, որոնք պահանջում էին Անին յանձնելյունաց:

Միացեալ նախարարները մերժեցին այս պահանջը: Յոյները երեք անգամ չայաստան մտան, առանց իրանց նպատակին համել կարենալու: Զորբորդ անգամ 100,000 հոգով նրանք պաշարեցին Անին: Դրութիւնը վտանգաւոր էր, բայց Վահրամ Պահաւունի սպարապետը 30,000 զօրքով յարձակուեց յոյների վրայ: Որոնք 20,000 մեռած ու վիրաւոր թողնելով, սարսափահար ետ փախան:

Անի մայրաքաղաքում այդ ժամանակ միմեանց հետ կոռուի մէջ էին երկու կուսակցութիւնն. մինի գլուխն էր Կեստ-Սարգիս-Միւնի իշխանը, որ տէրութեան խնամակալներ և շատ բերդեր ու գանձեր գրաւելուց յետոյ, կամենումէր ինքը թագաւոր դառնալ և կամ հայոց թագը յունաց յանձնել: Միւս կուսակցութեան գլխաւորն էր Վահրամ Պահաւունի սպարապետը, որ կամենում էր թագը յանձնել Աշոտի որդուն, իսկական թագաժառանգին: Այս յաղթութիւնից յետոյ Վահրամ իշխանը բերել տուաւ Գագիկին Անի և Պետրոս Գետագարձ կաթուղիկոսը օծեց նրան թագաւոր (1042):

Կեստ Սարգիս ամրացաւ Անիի Միջաբերդում: Երիտասարդ թագաւորն առանց թիկնապահի, մենակ, գնաց նրա մօտ և համոզեց հեռանալու: Ապա տեսնելով նրա չարագործութիւնները, բռնեց նրան և բանտարկեց Անիում:

Սակայն Վեստ Սարգիս քաղցր ու կեղծաւոր լեզուով գրաւեց երիտասարդ թագաւորի սիրտը և նրա իսկական բարեկամներին հեռացրեց ու թշնամացրեց թագաւորին, միւս կողմից էլյոյներին գրգեց, որ շարունակեն իրանց պահանջները:

Սակայն Գագիկ երկու անգամ չարաչար կրտորելով Մոնոմախոս կայսեր զօրքը, ետ դարձրեց ձեռնունայն:

Կայսրը զիմեց խորամանկութեան: Նա Գագիկին հրաւիրեց և, Պօլս մշտական դաշն կապելու համար, գեսպանների ներկայութեամբ խաչի ու աւետարանի վրայ երդուեց, վնաս չտալ նրան: Գագիկ չէր վստահանում, բայց Վեստ Սարգսի կուսակցիյներն ու Պետրոս կաթուղիկոսը համոզեցին Գագիկին երթալու և նրան ապահովելու համար երդման թուղթ գրեցին: Գագիկ չլսեց Պահաւունիներին և գնաց Պօլս: Կայսրը նրան մեծ պատուով ընդունեց բայց երբ Գագիկ յանձն չառաւ Անին նրան տալու, Գագիկին աքսորեց Ռափորի կղզիներից մինը:

Պետրոս Գետագարձ կաթուղիկոսը, որին Գագիկյանձնել էր Անիի բանալիները, բանակցութեան մէջ մտաւ կայսեր հետ և մեծ վարձատրութիւն ստանալով, Անիի քառասուն բալանիներն ուղարկեց կայսեր:

Գագիկ յուսատուած թուղթ ստորագրեց, որ հրաժարում է իր թագաւորութիւնից և փոխարէն ստացաւ Կապագովկիոյ Բիզու քաղաքը (1045 թ.):

Յոյն զօրքերն եկան Անին տիրելու, բայց դոները փակ գտան: Հայ զօրքը քաղաքացիների հետ միացած յարձակուեց յունաց վրայ, ջարդեց և հալածեց նրանց: Սակայն շուտով բօթը հասաւ, որ Գագիկ հրաժարուել է թագաւորութիւնից: Անին սուզ մտաւ և յոյները ետ կանչուեցան քաղաքին տիրելու:

Հայ իշխաններն իրանց անմիաբանութեան պառուղը չարաչար վայելեցին: Յոյները նախ աշխատեցան ցրուել հայ զօրքը և տիրել նշանաւոր բերդերին: Այսուհետեւ նըրանք ծանր հարկերով սկսան քամել ժողովրդի արիւնը: Որպէսզի ապատամբելու առաջն առնեն, նրանք մի կողմից հալածում ու կոտրում էին հայ իշխաններին, միւս կողմից թունաւորում կամ բանարկում:

Պետրոս Գետաղարձ կաթուղիկոսին էլ բռնեցին և Պօլիս ուղարկեցին:

Միւս կողմից, Տուղրիլ բէգը, տեսնելով Հայաստանի անտէր մնալը, յարձակուեց Հայաստան, առաւ Սմբատարերդը, և բնակիչներին սրի քաշեց: Տիրեց Արծն քաղաքին որ 150,000 բնակիչ ունէր և կոտորեց ու թալանեց բոլորին:

Տիրեց այսուհետեւ Արծէկ քաղաքին և սրի անցկացրեց բնակիչներին: Տուղրիլի գաղանութիւններից ազատ մնաց Մանասկերտը, որ պաշտպանուեղ մի քահանայի և մի ֆրանկ քիմիկոսի հնարքով, որոնք թուլացնում և կամ այրում էին թշնամու բարանները (պաշարման գործիքներ):

Տուղրիլի գաղանութիւնները շարունակեց նրա եղբայր Ալփասլան, որ Անին առաւ շնորհիւ հայ իշխանների թուլասրտութեան և կործանեց (1064):

Ալփասլան դեսպան ուղարկեց Կարս, Գագիկ թագաւորին, որ գայ և հպատակի: Գագիկ սուզի շորերով և ողբալով ընդունեց դեսպաններին, ասելով, որ սգում է իր բարեկամ Տուղրիլի մահը: Այս բանը շարժեց Ալփասլանի գութը և նա անվնաս թողեց Գագիկին: Սակայն, Գագիկն էլ, միւս հայ իշխանների նման իր երկիրն յունաց տարով, փոխարէնն ստացաւ Փոքր-Հայոց Ծմբաւ բերդը:

Տուտով Ալփասլան Տիրեց ամբողջ Հայաստանին և սկսաւ սպառնալ Յունաստանի սահմաններին:

Այսպէսով յոյները ոչ միայն չկարողացան Հայաստանն իրանց ձեռում պահել, այլ հայերի փոխանակ իրանց դէմէ ստեղծեցին մի կատաղի և վտանգաւոր թշնամի:

ՎԱՃԱՌԻ ՈՒԽՄ ԵՆ ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵՒԵԱ ԳՐՔԵՐԸ.

- 1) Հայ-հեղինակներ—Բ. տպ. բարեփոխուած. թոյլատրած  
կովկ. Հոգարարձուից . . . . . 1 լ.
- 2) Պատմական քերականութիւն մեծերի համար 75 կ.
- 3) Դպրոցական քերականութիւն, ծխական և պետական դպրոցների ստորին դասարանների համար . . . . . 25 կ.
- 4) Գրպանի ուղղագրութիւն դպրոցների համար 5 կ.
- 5) Հայոց պատմութեան վերջին հատորի կը լոյս կտեսնի մօտ  
տպագայւում:

ԳԻՆՆ է 40 ԿՈՊ.

Գումարով առնողներին բոլոր գրքերի համար 20% զեղչ.  
Դիմել Թիֆլիս՝ Կոմիեր. Սուլիշե, Վանցիան. կամ գրավաճառ-  
ներին:

Հայաստանի Ազգային գրադարան



NL0421442

15633